




Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱՌԳԱՅԻՆ ԴԱՆԱԹԱՐԱՆԸ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՆԳԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻՆԱՆԵՅ




ՅԵՐՈՒՍԱԼԱՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1870

Առն. Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Մերապան Պատրիարք :
 Դեր. Կարապետ Արքեպիսկոպոս :
 Դեր. Արխիմանկե Եպիսկոպոս :
 " Յովնանե Եպիսկոպոս Սեփեան :
 " Խորեն Եպիսկոպոս Նաբ-պէյեան :
 Աթ. Խորեն վար. փոխ. Երուսաղէմաւան :
 " Գարեգին վարդապետ Թամարեան :
 " Յովնանե վարդապետ Ղալաթիայ :
 Տ. Գրիգոր քահանայ Կէշիկճաղ :
 Տ. Սուրբառ քահ. Մայր Էկէզիցոյ աւագ լուսարար :
 Աւլըման մահտեօի Յովնանե աղա :
 Աղանանե Սկրտի և Կարապետ աղայք :
 Անանեան Պօղոս Էֆէնտի :
 Ապրո Սահակ Էֆէնտի :
 Առաքելանց Մարգար և Մարտիրոս աղայք :
 Արայանե մահտեօի Սարգիս աղա :
 Արթինօֆ Անտոն աղա :
 Արդանեան Ստեփան Պէյ :
 Բարաղամեան Յովնատի աղա :
 Բարսեղեան Ստեփան աղա :
 Գարրիէլեան Մկրտիչ աղա :
 Գալուստեան Ճանիկ աղա :
 Գալուստեան Ղազարոս աղա :
 Գայեթրեան Յարութիւն աղա :
 Գաղաթմեան մահտեօի Գաբրիէլ աղա :
 Գարակօյեան Յովնանե աղա :
 Գարակօյեան Միքայէլ աղա :
 Գալաթմեան Գէորգ աղա . (2 օրի .) :
 Գալաթմեան Յարութիւն աղա :
 Գալաթմեան Ղազարէթ աղա :
 Գալաթմեան Համարձում աղա :
 Գալաթմեան Յովնեփ աղա :
 Գրիգորեան Սիմօնիկ աղա :
 Եղմամեան Աւետի աղա :
 Երուսղեան Պօղոս աղա :
 Երանանկ վարժուհի Սերուբեան :
 Եօրտամեան Կարապետ աղա . (2 օրի .) :
 Զարդարեան Գէորգ աղա Կեօսարացի :
 Էմմեռեան Գալուստ աղա :
 Թաղաօրեան մահտեօի Ռուբէն աղա :
 Թաղաօրեան վրժանե աղա Ժամադորձ :
 Թաւշի պաշի Յարութիւնեան Առաքել աղա :
 Թաւշի պաշի Վարդանեան Տաթև աղա :
 Խիստաշեան Աստուր աղա :
 Խարայեան Ստեփան աղա :
 Խեթիւճեան Կարապետ աղա :
 Խեղարեան Ղազարէթ աղա :
 Խաչատուրեան Գ. մահտեօի Գաբրիէլ աղա :
 Խաչատուրեան Մկրտիչ աղա :
 Խարբերդցի Յարութիւն աղա Սամուէլեան :
 Կիւլպէնկեան Արէլ աղա :
 Կիւլպէնկեան մահտեօի Կիւլպէնկ աղա :
 Կիւլպէնկեան Կիւլպէնկ աղա Կեօսարացի :
 Կիւլպէնկեան մահտեօի Սերուբէ աղա :
 Կիւլպէնկեան Համարձում աղա Կեօսարացի :
 Կիւլպէնկեան Յովնանե աղա :
 Կիւլպէնկեան Սահակ աղա :
 Հաճեան Խիկեմեօր աղա :
 Համամեան Սարգիս Էֆէնտի :
 Հարենց Յօհան աղա :
 Հարենց մահտեօի Երանձում աղա :
 Հիւնքեար Կէշիկեան Սողոմոն Էֆէնտի :
 Կաղարտեան մահտեօի Խաչիկ աղա :
 Կաղարտեան Բրիտանուր աղա :
 Կաղարտեան Սահակ աղա :
 Կաղարտեան մահտեօի Սարգիս աղա :
 Կաղարտեան մահտեօի Սարգիս Խաչիկ :
 Կանուկեան Մանուկ աղա :

Մանուկեան Յովնանե աղա Կեօսարացի :
 Մանուկեան Սենքերիմ աղա :
 Միխիթարեան Միքայէլիւն Դ. Վէնեփիկ :
 Միխիթարեան Միքայէլիւն Դ. Վիլնեմ :
 Միսակեան Խաչատուր աղա :
 Միսայեան Վարդէրեան աղա :
 Միքայէլեան Սամուէլ աղա :
 Միւսահէճեան Մանուկ աղա . (2 օրինակ) :
 Մոսիկեան Յակոբ աղա :
 Մոսէն աղա աղուանցի Աճէմեան Վանեցի :
 Մուրադեան Կէորգ աղա :
 Յակոբեան Պօղոս աղա :
 Յովնեփեան Կարապետ աղա :
 Ղաթմեան մահտեօի Համարձում աղա :
 Կերակեան Գրիգոր աղա :
 Նիկողոսեան Պետրոս աղա :
 Նորատունկեան մահտեօի Գրիգոր աղա . (2 օրի .) :
 Նորատունկեան Յակոբ Էֆէնտի . (2 օրի .) :
 Նորատունկեան Սիմօնիկ աղա . (2 օրի .) :
 Շահաւէտեանց ընկերութիւն Սերաստից :
 Շամունճեան Ղաթմեան աղա :
 Ռոկոբի Սար Խա աղա :
 Չամբէրճեան Գրիգոր աղա :
 Չայեան Պաղտատար աղա Բինիկեանցի :
 Չայեան Մկրտիչ աղա Բինիկեանցի :
 Չրամեան Սարգիս աղա :
 Չրաքեան Միլլեմ աղա Արապկերցի :
 Չօլաքեան Սամուկ աղա :
 Չօլաքեան Ղաթմեան աղա :
 Պալեան Սարգիս Պէյ :
 Պալեան Անտոնիկ Պէյ :
 Պալեան Յակոբ Պէյ :
 Պալապեան մահտեօի Խաչատուր աղա :
 Պարտիզպանեան Ղաթմեան աղա :
 Պէյլէրեան Խալուփ Պէյ :
 Պէրպէրեան Սարգիս աղա :
 Պէշիկեան Միքայէլ աղա :
 Պէշիկեան Գէորգ աղա :
 Պօշակեան Սարգիս աղա :
 Պօշակեան Սիմօն աղա :
 Սաքայեան Ղաթմեան աղա . (2 օրինակ) :
 Սանույ ընկերութիւն Էրիսու :
 Սարաֆ Յակոբ աղա :
 Սերպիլեան Տօթօր Էֆէնտի :
 Սերպիլեան Յարութիւն աղա :
 Սեփեռեան Դան Էֆէնտի :
 Սմբատեան Յարութիւն աղա :
 Սուլախանիկեան Կիւլպէնկ աղա :
 Սուրենեան Յովնանե Էֆէնտի :
 Ստամբուլեան Կարապետ և Բարսեղ աղայք :
 Ստեփանեան մահտեօի Մկրտիչ աղա :
 Վարդանեան Արաճում աղա :
 Վարդապետեան Գրիգոր աղա :
 Տամաթեան Յակոբ աղա :
 Տամաթեան Արաճում աղա :
 Տառեան Զ. Առաքել Էֆէնտի :
 Տառեան Պ. Առաքել Էֆէնտի :
 Տառեան Պ. Մկրտիչ Պէյ :
 Տառեան Զ. Կերակ Էֆէնտի :
 Տառեան Պ. Կուրն օրիորդ :
 Տառեան Պ. Սիմօն Պէյ :
 Տերպիկեան պատուելի Յովնանե աղա :
 Տօղրամաճի պաշի մահտեօի Գաբրիէլ աղա Բէճա-
 ճեան :
 Տօնեկեան Յակոբ Էֆէնտի :
 Բեյլիմի պաշի մահտեօի Մկրտիչ աղա :
 Փանտեան Գէորգ աղա :
 Փալապեան Գէորգ Էֆէնտի . (2 օրի .) :
 Փէշաքանճեան մահտեօի Միքայէլ աղա :



ՀԻՆԵՐՈՒՄԻ ՏԱՐԻ
ԹԻՒՒ 4.

ԱՄՍԱԳԻՐ

ԱՐԹԱՆ 30
1870

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Ք

Սարսամայ Միօնիւ խոտաւոյաւ ած
Գորոցիս հանդիսին մէջ կարդաց
աւծ ճոտերն ու բանասիրականը ա
հաւաստի կը գնեմք Միօնի մէջ իբրեւ
աշակերտաց գրչի արդիւնը, ոչ որ
պէս կատարեալ, ալ որպէս աշակեր
տի գրութիւն, որ շատ պէտքեր կու
նենայ դեռ եւս կատարեալ ըլլալու :

ՄԵՐՈՒՆԱՄ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

ԵՒ ՎՍԵՄԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Ներկայ դարուս սովորութիւնը
կը պատարակէ այն մարդիկը որք կ'երկ
բային կամ կ'ամէնան բարի գործ գոր
ծելուն մէջ. և քաջալերութիւն կը

բարոզէ այսինքն ամենեւին չը վախ
նալ և անակնած դիմօք յառաջել ՚ի
բարեգործութիւնս : Ըրդէն յայտնի
է որ ընթերցասիրութիւնը կամ թէ
նոյնին վրայ ճառելով քիչ մը յորդո
րական խօսիլն ալ արժանաւոր գործոց
կարգին կը վերաբերի. ուստի և այս
երկաքէն մէկուն պարտաւորն ալ ՚ի
հարկէն է որ առանց ամենեւին ակնա
ծելու իրաւունք ունենայ մարդկան
առջեւ յառաջելու :

Սոյն եզրակացութեան քաջալե
րութիւնն աղգուութեամբ և ուժգին
կը մղէ զմէզ իբրեւ փորձ մենամար
տի մանեկ և ելլել հանդիսիս տառա
նը, ուրիշ և քանի մը խօսք ու զգել

մեծանձն և բզձակաթ հանդիսատե-
սաց խմբեակիս : Թէ և անկարող մը
տօք , սակայն բզձակաթ սրտով պիտի
խօսիմք մարդկային կրթութիւնը դաս-
տիարակութենէ : յառաջ գալուն վրայ
մեր դիմացն ունենալով Պլուտարքեայ
խօսուածքը թէ՛ « բնութիւնն զայր
ամբիժ գլխովին և ամենակատար ՚ի
վեր բերել ոչ ունի » :

Յայտնի է ամենուն որ ամեն բա-
նական էակ ունի բանական հոգի .
հետեւապէս միտք և կամք , ունի մը-
տածողութիւն և խոհականութիւն ,
բայց ոչ հաւատարմապէս : Բանդի բա-
նականութիւնը , որ միմիայն մարդուս
յատկութիւնն է : և անոր բնութիւ-
նը կը յայտնէ , ոչ հաւատարմապէս ներ-
գործած է ամեն անհատի մէջ , այլ
ոմանց շատ և ոմանց քիչ , ինչպէս ար-
դէն կը տեսնեմք մեր տեսութիւննե-
րուն մէջ , որչափ զանազանութիւն
կը տեսնեմք մարդոց , այնչափ ալ մը-
տածողութեանց տարբերութիւն , ու
րոնց մէջ այնպէս հրաշալի կը գործէ
բանականութիւնը որ , կարծես թէ
արարած չեն : Այն ալ մարդիկ որոնց
գործերն այնչափ ցուրտ են որ կար-
ծես անոնք ալ բանականութենէ չեն
առաջնորդուիր : Արդ տնտեսին շատ
տեղեր արարածներ , որոնք ամենեւին
չգիտեն թէ ինչ է մարդկութիւնը
և ինչ արժէք ունի և թէ արդեօք
տարբերութիւն մը կեցած կրնայ՝ բը-
լալ մարդոց մէջ , Վենետիկն չեն գի-
տեր որ արդեօք մարդկութեան յառ-
կութիւնը պոյժառացիներու դարման
մը կայ և կրնայ բլրալ : Չեն գիտեր
թէ ինչ է կրթութիւնը կամ դաս-
տիարակութիւնը և ինչ հետեւութի
կրնայ ունենալ , շատ չերկարցնենք
խօսքերնիս , վերջապէս չը գիտեն թէ
ինչ է բանականութիւնը , և ինչ կը
պահանջէ իւր ենթակայներէն : Ու-

րեմն այն մարդը որ իւր պաշտօնը
կամ լաւ եւս է ըսել իւր յատկութե-
վերաբերեալ գործը չը գիտեր և չը
ճանչնար , այն մարդը որ իր արժէքը
և պատիւը չը գիտեր և չը ճանչնար ,
ինչպէս կարելի է ճանչնայ միւս ա-
րարածներն ալ , և ինչպէս կարելի է
բանականութեան պաշտօնն անթերի
վարած բլրայ , որ է Վետուծոյ նմանիլ
որ անկարելի է մարդուն համար , ե-
թէ չը կարողանայ ճանաչել բնութե-
բոլոր արարածները , Բանականութիւն
մտածողութիւն և խոհականութիւն
կը պահանջէ իւր ենթակայներէն , և
ինչպէս կարելի է գերադոյն սեպու իլ
միւս արարածներէն , մինչ անոնցմէ
տարբերուի մը չ'ունի . ինչպէս կարելի
է անոնցմէ տարբերիլ քսնի սրբանա-
կանութիւնը չ'ներգործէր բացար-
ձակապէս : Այլ կերպարանօք պիտի
ըսեմք , մարդկութիւնը արտաքին ե-
րեւոյթի վրայ չ'է . իսկ եթէ մտա-
ծողութեամբ կամ խոհականութե-
րսեմք , արդէն ինքը անոնցմէ այնչափ
հեռացեր է որ ամենեւին յոյս չը կայ
վերադառն մօտենալուն , և ահա այսպի-
սեաց համար է մարդարեւութեանց
դանդատումը , որ առանց երբէք ակ-
նածելու կը գոչէ , « մարդ ՚ի պատուի
էր և ոչ իմացաւ , հաւատարեցաւ ան-
բանից և նմանեցաւ նոցա » , Վհ կ'ա-
մաչեմք ըսելու թէ ճշմարիտ է . սա-
կայն ուշադրութեամբ ալ յարմար կը
գտնենք մեր ընթացքին , կամ աչ-
խարհիս մեծագոյն մասին ընթացից ,
ի բաց առեալ անոնք , որ գիտեն բը-
նութեան զօրութիւնը , և անով ալ
թէ մարդ ինչ պարտք , և ինչ վա-
յելքներու իրաւունք ունի : Այլ թէ
այս ամենը պատկերացնելով մեր մը-
քին մէջ ուշի ուշով նկատելու բլանք
պիտի տեսնեմք , որ այս ամենը ուրիշ
բաներու պատու զները չեն , եթէ ոչ

ազխտութեան եւ անկրթութեան ։
 Վանդի դատարարակութեան լուսա-
 շաւիղ ճառագայթներն են , որ իրենց
 ծաւալուած տեղերը անմիջական նշոյլ-
 ներով կը փայլեցնեն ներկայի որդիներ
 ըրտ Որովհետեւ դատարարակութիւնը
 որ բոլոր բարութեանց արմատն է ,
 կը ծոխացնէ մարդու իմացականութիւնը ,
 դատարարակութիւնն է , որ
 կը ծանցնէ մարդու իւր պարտաւոր-
 ութիւնները , պատիւը պայծառացը
 ներով , դատարարակութեամբ է , որ
 մարդս կը գործէ ըստ իւր բանակա-
 նութեան ։ Առ որում որչափ որ մար-
 դրս բանական սակղծուած է , անօգ-
 նական չէ կարող իւր գծին մէջ յա-
 ռաջանալ , զոր օրինակ , նորածին մա-
 նուկ մը թողունք անասնոց մէջ , ան-
 մարդաբնակ վայրերու մէջ , պիտի
 տեսնեմք որ մանուկն աճելով պիտի
 դառնայ նոյն անասնոց բնութեանը ,
 նոցա ձայնը պիտի հանէ , վասն զի
 խօսող մը չը կար իւր առջեւ որ ա-
 նորմէ խօսիչ սորվէր , անասնոց շար-
 ժումները տեսաւ , և նոյնն ստացաւ ,
 այսպէս ալ եթէ՝ ունենայ իւր առ-
 ջեւն ըստ բանականութեան գործող
 կատարեալ օրինակ մը , նոյնը պիտի
 սորվի անտարակոյս ։ Արդոյ հանդի-
 սակմք , Չեզ հարցնեմ , ինչ է պատ-
 ճառը որ այս դարը լուսաւորութեան
 դար կը կոչուի , եթէ ոչ մարդկութիւնը
 որ մինչեւ ցարդ իւր դատարարակու-
 թեան թերի ըլլալովն ըստ մարդկու-
 թեան կատարելութիւններ գործելու
 կը տկարանար , այն դարերու մէջ
 դատարարակութեան յարգն աւելի
 ծանաղելով հետզհետէ կ'ուզէ իւր
 ընդ պայծառացունել , Կէ հին ժա-
 մանակաց բազդատութեամբ հիմա
 աւելի շատ կ'երեւին կրթեալներ ,
 Ահա ստոր համար է որ լուսաւորեալ
 կը կոչուին վերջին դարերս ։

Այցեալն արտասալ ուրիշ օգուտ
 չունի եթէ ոչ ապագային ուղիղ
 շարժելու գրգռմ'մ' զգալ . մեզ հա-
 մար մտածելու չենք ամենեւին որ
 ինչո՞ւ մեր ծնողները կատարեալ դա-
 տարարակութեան չեն յանձնած մեր
 կենաց սկիզբները , մեր թերին ճա-
 նաչելով ապագային կատարելութիւնը
 պատրաստել , աշխարհի առջեւ հա-
 ռասար պարծելի է , առաքինի մը շա-
 րունակ գործելու պարծանացը ։ Այս-
 պէս ահա պիտի վայելէ աշխարհ (ոչ
 երկրագունդն , այլ մարդիկներս) ա-
 տիճանաբար բանավորութեան քաղց-
 րաճաշակ սրտուղներէն , մէկը միւսին
 աւանդելով շարունակ ։

Արդոց յառաջագիմութիւնը 'ի
 փառս Հարց է , և երբ այս ինչ դար
 մը կը պայծառանայ դատարարակու-
 թեան և գիտութեան նշողութիւն , կը
 հետեւեցնեմք որ այն լուսոյն ծագու-
 մը նախորդ դարուն սկսած է ։

Վնն եղբակացու թիւն յայտնի դը-
 րուելու հարկ չկայ ։ Արիստոքատու-
 թիւններն ալ կը գուշակեն լսողնե-
 ներուն , ըստ որում հետեւեցուցին
 հետեւութիւնն անմիջական է ։ Որով
 և կը պարտաւորիմք միշտ մեր ստա-
 ցածը մեր Արքազան Հօրդ , գերապա-
 տիւ Հարց և ընդհանուր Աղգին ճիշ-
 մարիտ բանասիրաց , զոր խոստովա-
 նիլ մեր քաղցր պարտականատարութիւնը
 համարուած է մեզ միշտ ։

Գեորգ Տ. Յարութեան Իմացելի ։
 Ա. Ժ. Վարդապետի ։
 Յաթ Տէրաւ ։
 1870 . Ապրիլ 2 ։

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ԽՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ ՆԻ ՅԱՐԳՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆԻ

Չկայ երբեք երկրագնդին վրայ ազդ մը՝ կամ որ և իցէ ժողովուրդ մը, որ ամէն կողմանէ թէ բնապէս և թէ բարոյապէս կատարելութիւն ստացած ըլլայ, սակայն ներկայ դարուս մէջ ամէն բերան, ամէն շրթունք և ամէն մատ կը ցուցունեն ազգեր, զորս ամենալուսաւորեալ ազգ համարած՝ և իրենց յայտն անոնց վրայ դրած և զայն իրենց առաջնորդ բռնած՝ անոր շաւղին հետեւեւելու կը ջանան։ Արդեօք ինչէ ասոր շարժառիթը, և ինչո՞ւ արդեօք մեր ազգն ալ այսպէս օրինակ մը չէ կարող տալ, անտարակոյս ունի իւր պատճառը, և որով հասարակաց կատարելութիւններն անօգուտ, մասնաւորաց հանձարներն և թէ ծածուկ և և թէ երբեք ճանցողին տը բոտ չափու արժանաւորութիւն չունեցող, իւր օգտաւ կար առաջարկութիւններն անգործ, վերջապէս իւր կենդանութեան շունչ սուտղ ամէն պարագայներն երեսի վրայ մնացած են։ Արդեօք կոյ տչխորհիս մէջ ազդ մը՝ որ ունենաց այնչափ բնութան կատարելութիւններ մեկտեղ, որչափ որ Հայ ազգին փորրիկ խմբեակին մէջ գտնուող անհատներն ունին։ Հայն իւրօրայի մը աղգէն յետ կը մնայ։ Աւրօպական աղգերու ունեցած կատարելութիւններն՝ ըստ ամենայնի կրնաց ունենալ և Հայն ալ, վասն զի այն կատարելութեանց բուն սկզբնառիթ եղող ըզգայուն օգին ունին։ Դասնք սը թող օր ունին նաեւս բարեխառն կազմուածք, բարերար բնութիւն, և ասոնցմէ զատ իրենց զգայուն և շարժուն հոգւոյն արգասեօք՝ ամէն բնական նրբ

բութեանց մէջ յառաջադիմելու կարողութիւնն և ամէն տեսակ ուսմանց և արհեստից համար զարմանալի յարմարութիւն։ Թող չըսուի որ Հայ մը Հայուն համար գովեստ կ'ուտայ, ոչ, Հայուն այս յատկութիւններն օտար ազգաց բերանն ալ գովաբանութեամբ հուշակած է շատ տեղեր։ Այս ուրեմն ու չպիտի ըսէ թէ Հայուն պակասութիւնը միայն ժողովրդաց թերի կրթութիւնն է։ Բայց արդեօք Հայը ընդունեց այս մտկոյիւրը, և պիտի թողու որ սերիշները իրաւունք ունենան այսուհետեւ ալ այսպէս անուանել զինքը։ Վնենելին ոչ, մեծ յուսով պիտի խօսիմ, որ Հայն այսուհետեւ այս թերութիւնն ալ պիտի վերցունէ իւր վրայէն, որովհետեւ երբեմն ցոյց կուտայ իւր ընթացքին մէջ նաւայնալիսի շարժումներ, որոնք ազգի մը իսկական երջանկութիւնը կը նկատեն, և այնպիսի երջանկութիւն բառաջադիմութեան ցոյց է, ինչպէս որ կը կատարէ ինքը օգինները շարժող ազգային օգտակար հանդէսներ, որոնք խիստ օգտակար են և պիտի ըլլան իւր ապագայ երջանկութեան համար, և և րոյց կարգէն է նաեւ այսօրուան հանդէս, որուն առթիւ այսօր իւր ուն բաղմունքիւ, Արդայ Հանդիսականը, ժողովուրդն առ նպատակ ունիք Չեզ՝ աղգիս քանի մը մանկանց՝ անցեալ օրերու մէջ ցոյց տուած, իւր վաստակոց տկար և քիչ յառաջադիմութիւն վարձատրելու։ Ահա աշխատող մանուկին համար, բաւական գալ պիտի ըսն հարց հայեցուածք մը, որ թեթեւ ինչ կը ժպտի ապագայ բարիքներ սպասող մտաց հետեւութեամբ։

Իսկ թէ՛ Հայը ազգային օգտաւ կար հանդէսներ կը կատարէ, արդեօք ինչ օգուտ պիտի ունենայ, որո

նենք անգամ մը թէ ազգի մը լուսաւորութեան համար այս տեսակ հանդէսներ կրնան երբէք արտադրել որ և է մէկ նպատակ :

Ըստած և դիտուած բան մ' է արդէն՝ որ մանկոյն ազգաց սերունդըն է . և մանկութիւնն է ապագայի կենաց որակութեան վճիռը տուող : Սակայն գիտենք առ հասարակ , որ մանկութիւնն ըստ ինքեան ի բարին շարժելու յուսողիչ կէտ մը չ'ունի , և մանկութիւնն եթէ ըստ ինքեան պիտի ծերանայ , նորա հետեւութիւնը կամ արագայն վճռելի չէ . բայց միայն մանկանց տրուած կրթութիւններն են , որ գրեթէ բացարձակապէս կը նախատեսեն անոնց ապագայն : Եւ որովհետեւ դպրոցն ուրիշ բան չէ , եթէ ոչ հասարակաց մանկութեան կրթարան , ուստի և կը մնայ մեզ անսնել թէ՛ արդեօք այս տեսակ հանդէս մը կամ քննութիւն մը ինչօգուտ կարող է ունենալ դպրոցներու յառաջադիմութեան համար , ուրիշ տեսակ օգուտները զանց ընելով միայն կրնիստենք որ գործ մը քաջալերութեամբ կրկին կը յառաջանայ այս քաջալերութիւնը դրոցին համար ուրիշ բան մը չէ , եթէ ոչ քննութիւն և անոր հետեւարդ այս առուր հանդէս , և ասանց նմանիները , որ ուրիշ բան ըսել չէ , եթէ ոչ քննութիւն ցուցուած այն քիչ արդեանց հաւանութիւն մը , սրտի աղնիւ գիացմամբ որ բորբոքիչ պիտի ըլնան անշուշտ աշակերտաց ջանից և աշխատութեանց , թողունք օտար ազգերը մանաւանդ Հայուն համար մեծ օգուտ ունի հանդէսը , որովհետեւ ցրուած է ժողովուրդը առտ և անդ , շատերը հեռաւոր երկիրներ գաղթուած , զուրկ ի միութենէ , և անոր արգտ սիրներէն , ուստի հասարակութեան

մէջ կատարուած այս տեսակ հանդէսները , անշուշտ այն հեռաւոր տեղեր գտնուած Հայուն սիրտը պիտի գըրաւէ և պիտի շարժէ՝ որ ինքն ալ քանի որ Հայ վեամ լանունը կը կրէ , ձեռնառու լինի և մասնակցի այն որակութեան՝ որ ընդհանուր ազգին համար է . քանզի դպրոցն է ըստ մեծի մասին որ զինքը պիտի կացուցանէ ապագային մէջ : Եւ արդէն երբ դպրոցն սիրտ մը այս տեսակ հանդէսներու ներկայանայ՝ անշուշտ պիտի ըզգածի և պիտի սկսի իւր սրտին մէջ ծագիլ եռանդ մը և հետեւաբար պիտի սկսի օգնել դպրոցաց :

Երբ՝ հասկցանք որ , հանդէսն մեծ օգուտներ կ'արտադրէ եղեր դպրոցի մը համար , ուրեմն ինչ ընելու եմք ասոր ծաւալման համար , թէ ոչ շարժիլ , որովհետեւ շարժումը կենդանութիւն կ'ենթադրէ , կենդանութիւնն ալ միշտ գտնելի է : Ինչպէս ամէն դարերուն՝ նոյնպէս և ներկայ դարու մէջ մարդկութեան վնասակար և ախնէն եպերելի յատկութիւնըն է անշարժութիւնը . անշարժութիւնը կրտսմ , որոյ հետեւանքն է կատարեալպէս փոտիլ ու նեխիլ իսկ : Եթէ չը շարժիմք , անշուշտ պիտի վնասուիմք , և որով պիտի կործանեմք Սահակեան և Սեպուկեան սուրբ Հայրապետաց Հայոց ազգի լուսաւորութեան և վերակենդանութեան համար հիմնած՝ սուրբ տաճարը : Սթէ նախատինք չէ՞ Հայուն այն ասեն՝ երբ Հայ գրականութեան այն բարձր դիւցազանց կառուցած շէնքը կործանի , միթէ օտարը ինչեր չը պիտի զուրցէ իրեն . մենք կը պարծիմք որ , մենք հայու օրդի եմք , Սահակ և Սեպուկ Հարեր ունիմք , սակայն երբ իւրեանց ընթացքը չ'բռնեմք , և եթէ անոնց շուղին չը հե-

տեւիմք, միթէ օտարներն իրաւամբ
պիտի չըսեն մեզ այն յանդիմանական
ճշմարտութիւնը թէ՛ «Եթէ որդիք
նոցա էիք, զգործս նոցա անշուշտ
գործէիք» Արեւմն աւելի օգտակար
շարժումներ ցոյց տալով, ջանալու
ենք անոնց շինած շէնքը աւելի զար-
դարել և բազմացունել, և ասոր հա-
մար ջանալու եմք ծաւալել այն վեհ
սկզբունքները, որոնք կը ծառայեն
գալլոցի մը վերակենդանութեան հա-
մար, թէ հալածել պէտք է ագիտու-
թիւնը և մտքերը լուսաւորել և մը-
շակել, որովհետեւ անկարելի է, ան-
մշակ օրտի մը մէջ լոյս արծարծել, ըստ
որում անմշակ սիրտ մը կը նմանի այն
անապատին, ուր չորացած խոտ միակ
կ'երեւի վերընծիւղեալ, ուստի պար-
տաւոր եմք զանոնք յորդորել և խրա-
խուսել որ ամէն ջանք ի գործ դնեն
ազգի լուսաւորութեան համար, և
այս տեսակ հանդէսները եւս անոնց
գլխաւորներէն մին ըլլալով, աւելի
ջանալու ենք զայն ծաւալել, որովհե-
տեւ որչափ որ հանդէսն երեւի, նոյն
չափ շտապեցած պիտի ըլլամք գալլո-
ցի սէրը, որն որ իսկ ինքն է ազգի մը
զէկը, նա է անոր անիւը, նա է իւր
գաւազանը, վերջապէս նա է իւր լու-
սատու ջահը, որն որ աշխարհ ամե-
նայն անոր շաւղին հետեւեւրու կ'աշ-
խատին։ Եւ եթէ Հայը լուսաւորեալ
զաւակ մ'ալ ունենայ, որովհետեւ
նոցա ալ գաղտնաբարկութեան սրկը-
նապատճառ՝ միմիայն գալլոցն է, վրան
զի նոքա հոն պիտի կարենան իրենց
հարկ եղած մտաւորական զարգացու-
մը գտնել, հոն պիտի տեսնեն նոքա
կատարեալ մարդկութեան մը պէտք
եղած բոլոր գործերը, հոն պիտի
փոքր ինչ աշխատելով կարողանան ա-
պագային համար օրինելու որ հանգըս-
տութիւն մը ստորադասուել, հոն պի-

տի ճանչնան նոքա իւրեանց ազգը և
և կրօնքը և այն տեղէն պիտի ստա-
նան հանճար և կրթութիւն իւրեանց
բանականութիւնը իրր լոյս փայլեցը-
նելու համար, որովհետեւ հանճարն
ու կրթութիւնն է որ զմարդ անբան
կենդանիներէն կ'որոշէ, և նոքա այն
տեղէն պիտի գտնան իրենց մարմնա-
ւոր պիտոյքը հոգալու՝ ամէն կերպ
գործիքները, և այն տեղէն պիտի ծա-
գի Երտուած պաշտութեան գեղեցիկ
պատուը, այն տեղէն պիտի սորվին
անոնք իրենց առճնադս ունեցած սար-
սուց ճանաչումը, այո, գալլոցը պի-
տի ցուցունէ անոնց կանխապէս ըն-
կերսիրութեան և միաբանութեան
արդիւնքը, հոն պիտի սորվին անոնք
թէ ինչ բնէ պարտք և իրաւունք,
վերջապէս գալլոցով պիտի յառաջա-
նան այն ամէն բարեգործութիւննե-
րը, որոնք մարդուս իւր կենցաղոյն
մէջ երջանիկ ապրելու նիւթերը պի-
տի ըլլան։ Արեւմն ամէն անհատ ա-
ռանց տարակուսելու թող ճանչնայ
թէ ստորադասութիւն ունի, իւր
ազգի սիրոյն, գալլոցաց յառաջագի-
մութեանը փոյթ առնելու, ասոր ալ
չստ տեսակը կայ, որ և է ատախճանի
մարդ կարող է այն մի մի տեսակով
նպաստել գալլոցաց։

Երգ՝ քանի որ գիտցանք թէ հան-
դէսը խիստ պիտանի գործիք մը է՝
յառաջադիմութեան համար, և հե-
տեւապէս քանի որ խիստ մեծ օգուտ-
ներ ունի գալլոցի մը համար, և որով
հետեւ գալլոցն ալ ամէն բարեաց աղ-
բիւրն է, և որոյ յառաջադիմութիւնն
ազգէն կախումն ունի, ուրեմն ցոյց
տանք կենդանի շարժումներ և ջա-
նանք ջնջել այն վատ անունը՝ որ կու-
տան մեզ շատերը «Հայերը թերա-
կիրթ են» ըսելով։

Չմոռանանք ըսելու որ բարեգոր-

ծին յառաջ բերած օգուան երբէք չը մտցուիր, դպրոցիս քիչ և շատ, ոչ թէ յառաջագիմու թիւնը՝ այլ անոր աշխատութիւնը, դարձեալ կը պարտինք անոր հոգաբարձու Սրբազանիդ և Վերապրտութիւ միաբանական սուրբ հարց, որոնց սրտի փափագանաց հետեւութիւնն է անշուշտ որ ազգային մանկտայն մէկ մասն կը դատտիարաւ հուինք դպրոցիս մէջ, Վարուց ՚ի դարս յաւէժ պիտի հնչուին բարերարաց այսպիսի անփոխարինելի ձեռնարկութիւններն զոր յառաջունէ բերնով բսել ամէն ոք կարող չէ, հոգւով և սրտով իմանալ շատերը կարող են :

Յ. Յ. Թաւադի :

Այս . յառաջ . Վարձարանի :

1870 Ապրիլ 2 .

Ղարապետ :

Բանախոսութիւն բանասիրական, ազգասիրութիւն, ազգատնեցութիւն, աւետարելի, գութարկու, յուսանաւ ահա խոսի :

Աղբաւեր . Չմնաց ազգային օգին, չմնաց և ճանաչող, ազգատիրութիւնը իննետուեցայ, զրի իմ անձա և ուղեցի փրկանօքս ապրեցնել, սակայն ով գիտէ աշխատողին միտքը, վատակողին քրտինքը, մշակին վարձը, ով գիտէ զօրապետին պատիւը, յաղթութեան մրցանակը, քաջալերութեան հետեւութիւնը : Ամենայն ինչ դարձան ոչինչ : Կը յորդորեմքնկերս, կը մերժէ խնդիրս, վասն զի իւր անցեալը կը յիշէ . կը յորդորեմք բարեկամս, իւր կորուստը կ'ափոտայ, կը կանչեմ զրացիս, գալիքը կը խորհի, անցորդին կանչեցի և ցաւօք

որտի լուցի, որ և է իշխանութիւն թագ է իմ գլխուն : Վաշուեցայ մէկ կողմ և չդադրեցայ, կարծես եռանդըս կը բորբոքէ ջիղերս, կամ թէ աբիւնս կը ճմլէ սիրտս : Կամ ձիւնի կարկառ մը ինկնայ իմ վրաս զովանամ քիչ մը, կամ աղբիւրակ մը հոսէ մազերուս որ պողիմ քիչ մը, ապա թէ ոչ համայն աշխարհը փայտ է առջեւս, թող լուռ կենան, այրեմ բոլորը : Խռոշներէ կանչեցի չունէր արձագանգ ձայնս գազաթներէ կանչեցի, առանց մէկը լսելու ցնդեցաւ յօդս :

Աղբաւեր . Ինչ ձայնք կը թողուս դարձեալ, ազգասէր, ազգասէր, գործըդ ով է տեսեր . խօսքով ինչ կըլայ, օտարազգիներէն ալ չէք տկնածեր, կարգ և կանոն գիտցողներն հիմայ ինչ կ'ըսեն : Չգէնք գործերնիս կանգնինք մէջ տեղը, անցեալէն ՚ի վեր կեցած ես այս տեղ և չեմ գիտէր զեռ թէ ինչ է շահդ : Այս երկու մարմնաց շփումը կայծակ կը բերէ, սակայն ջուրը ջուրին զօրկ, կամ թէ փայտ մը առ ջուր ծեծէ : Արդէն չէք նկատած որ շոգենաւայ մեքենայներ հազարաւոր ձիերու զօրութեամբ 60 տարիէ ՚ի վեր անդադար կը ծեծեն ջուրը . ես եւն ինչ տեսար, չէ թէ միայն հուր չիկայ, այլ և ոչ իսկ կայծ, և այսուհետեւ ալ մի յուսար :

Վարձաբեր : Օլոր ջան անօգուտ վատակ . պատգամախօսի մը չափ գիտեմ որ Հայոց ազգը երէկ չէ խնդացեր, վաղն ալ պիտի չխնդայ, թէ և կանխատես ըլլալու համար շատերը պիտի ցաւին որ հանուր ազգի մը կը գուժեմ, սակայն ինչ ընեմ, անունս գուժարեք : Սիրտս է որ ներքին տեսութենէս խորին մտածութիւններէս կը թելադրէ զայս ըսել, և ոչ միայն բերանս է կ'արտասանէ : Թող հաւ

կցողները միայն հասկնան։ Աշխարհիս
խմատունն և հմուտ բանասիրութիւ-
նըն այսպէս բանասիրած է, և այսպէս
կրնայ ուղիղ խմատասիրած ըլլալ։
Շարժումն, և տարբերութիւնն, սէր
և միութիւնն, կանգնումն անդրդո-
ւելի։ Գողութիւն կեղծութեան,
անկումն անկանգնելի։ Խօսք անի-
մաստ, պատիր հետեւանք։

Եւթագիր։ Ա, Աղամի վրայ բու-
կը խօսի։ Վնայելի ազուէաներն անու-
թի մնացած են։ Չգիտեր երբէք որ
Լըռւտողէմ Ալեքիսեղեկի շէնք, քա-
հանայի հիմնարկութիւն և օրհնու-
թեան քաղաք է։ Հոն ինչ դործ ու-
նին գուժարերի անուանակիրները։
Արժնի որդիներ գրուած են Հայու-
որդիները, պիտի աղբիւն անշուշտ հա-
յու որդիները, նոցա արթնութիւնն
իրենց երջանկութիւնը թշուառութե-
պիտի չտանի երբէք, սպասեցին, եւ
պիտի ձեռք բերեն իրենց հան-
գիստը։ Ահաւասիկ կը խնդամք և պի-
տի խնդամք, և երէկ որ ժամանակ
չէմք խնդացած։ Թող առիւծը բարձ-
րանայ, աղուէն կերակրուի։

Գոթագիր։ Լոս կ'ըսեմ հաց չու-
նիմք, ան կ'ըսէ ջուր ունիմք, արեան
հիւանդութիւն ունեցողին ջիւղ կը
ծակեն որ առողջանայ, երբ ծակը
չգոցեն, այնուհետեւ կ'եանք կը գիմա-
նայ։ Քանի հոգի պիտի կարենամք
համոզել երբ ըսեմք ջուրը գէպ ի իւր
ակը կը վաղէ, ըսեմք թէ հաւատա-
ցողներ եղան, պիտի ըսեմք որ, այն
պիտիները կամ չեն գիտէր ինչէ ջու-
րին վաղելը, և կամ ջուրին որ կողմը
կ'ըսուի աղ, այսօր աղ վաղն աղ անու-
նըս գուժարեր է, չը խնդայինք եւ
պիտի չխնդանք։ Տգէտը կորստեամբ
պիտի մեռնի, անմիտը զինքն երջանիկ
պիտի կարծէ։ Ահա թաղ տրամի, և
կէոր միսթարուի, տրամին գիտու-

թեամբ, միսթարուին չ'գիտու թիւ։

Ագագիր։ Կենդանի է հոգիս և ար-
թուն, ինչ որ կ'ըսես ինչնին չես գի-
տէր, եթէ համարձակէիր դքեղ սու-
յիկեան մը ձեւացնել պիտի ունենա-
յիր, աշխարհի զանազան և դրութե-
ամեն կողմերու ուրախութիւնը։ Այի
թէ այսինչ մարդիկն եւս հոգի և
մարմին չեն մեղի չափ։ Լոս է թէ պի-
տի չխնդայ մարդը, ասոնք ինչու
կը խնդան, քանի որ ասոնք կը խնդան
եւ և դու ինչու պիտի չխնդանք, մեղի
ինչ կը սրտիս, եթէ նոցա խնդուիլը
Ետուծմէ է, ահաւասիկ մենք ալ
նոյն Աստուծոյ արարածն ենք, ե-
թէ աշխարհէն է, ահաւասիկ մենք
ալ աշխարհի մէկ մասին վրայ կը գրու-
նուիմք, եթէ զօրութենէ է ահաւա-
սիկ մենք ալ թագաւորութեան կը
ծառայենք, եթէ ըսենք խմատու թե-
նէ է, ահաւասիկ ուսմանք ալ ձեռք
բերելու վրայ եմք։ Հոգիս աղգատէր
է, մարմինս փատակաւոր, քանի որ
աղգատիրութիւն կայ, աղգերը կան-
գուն են։

Ետագիր։ Իրողհետեւ բարեկա-
մաց այս փորրիկ ատեանը ծանօթա-
ցու մէկ մէկու իւրաքանչիւրն իւր
յատուկ անունն յայտնելով, և մենք
եւս կը փափագիմք այն խմեակին
եթէ ոչ անգամայիլ երկար վիճարա-
նութեամբ, գէթ քանի մը խօսքերով
երկու կարծիք յայտնել, ուստի նե-
րեցէք մեղ ալ ականջ դնել քիչ մը.
անուես յուսահատ է, գործերս մե-
ռեալ, ձայնս անշունչ, կարծիքս ան-
լուր։ Հետեւցուցի, չը հասկցան,
փատառքանեցի, չը կարողացայ համոզել
փափաքածս ձեռքս բերել ջանացի և
չհասայ, ուստի և ամեն ոք կարծեմ
դիւրաւ պիտի հաւանի, թէ անու-
նըս ուրիշ բան չէ և չը կրնար ըլլալ,
եթէ ոչ յուսահատ։ Հիմայ պիտի

խօսիմ ձեր մէջ, սակայն մէկ կամ միւս կողմի ակնսուսութիւն պիտի չենւմ, թող ցաւ ալ չըլայ. ազգասէր բարեկամ, դուք գեռ փորձառու չէք. դուք ալ գուժաբեր բարեկամ, շատ երկչոտ էք այնպէս որ ձեր պաշտօնին տարածէն ալ աստիճան մը կամ երկու ուեղի, երեք ալ եթէ ըսեմք կ'ըլայ. Գուք իմ յաւաստաւ թիւնը անցած էք. որչափ որ փոքրը ջուրին չիկելով կայծ յառաջ չդար, Կիկերայ այսր ամենայնի աշխարհս ալ ամեն ատեն ամեն պարագայի մէջ փայտը ջուրին չը մերձենար, վասն զի ջուրէն զատ ուրիշ շատ սեռակ մարմիններ եւս կան, որոց ալ չփութի միշտ արդիւնաւոր հետեւութիւն ունի, սակայն ինչպէս որ կը կարծեմ, դուք նաւաւարութի կամ նաւորդութիւն շատ բրած բրտու էք, և ներհակաբար մեքենայից ջուրի վրայ բրած հարուածէն կայծ կ'ընպասէք. մինչդեռ այն հարուածն հնարուած է, որ նաւն յառաջ երթայ. փութէն խողով չեն սպասեր, խողով չեն ալ թուզ չարդաբերեր. ամենայն շարժումն ունի իւր հետեւութիւնը. Կհաւասիկ հանդեսներու մէջ ներկայացնելիք նաւաւար մը կամ նաւորդ մը. որ չ'գիտէր թէ ինչ արդեօք կը նկատէ նաւին շարժումը:

Եղգասէր, Եւելի ուղիղ կը խօսիք և ըստ բանասէր մտայ, քանթէ սըխալ:

Գոթաբէր, Ասալ կը խօսիք ըստ ազգասաց եւս:

Եղգասէր: Եթէ ներքին է մեզ անունս չ'յայտնած և խմբեակիդ բարեկամներէն մին չ'գտնուած ալ. Պիտի խնդրեմ որ, դուք ազգասէր բարեկամ, յայտնէք մեզ ինչպէս ուղիղ կը խօսի յաւաստաւոր: Եյնուհետեւ ձեզմէ ալ (Կգոթաբէրը նայելով)

կը խնդրեմք որ հասկցունէք թէ որն է այս բարեկամին (Եղգ Կյաւաստաւոր երկնյնելով յեւել) խօսած սխալները, որ յայտնի է և ազգասաց:

Եղգասէր: Ի՞նչ կը առգնադիք բարեկամներ. գործերը բոլոր թիւր են և հակառակէն նկատելու է. փորձառութիւննիս մեզ այսպէս ըսել կուտայ, բայց չեմ գիտեր թէ ուրիշները գեռ փորձառու չ'ըլլալով զմեզ թիւր կը կոչեն, եթէ նպտ ալ ունին փորձառութիւն մը, և մերն անոնց փորձառութեան քովաւելի թիւր է: Կանի որ աշխարհի մէջ նենգութիւն կայ. որո՞ւ պիտի վառահիմ թէ ան նենգ է և ուղղունթաց, գնացի Աստակին բարեկամացայ, միւսին խորհէ. ցանք որ Հայաց ազգը որ ժամանակ ալ որ ըլլայ կարող է իւր կրօնքն ազատել, մեզ կը մնար միայն ազգին թագը պաշտպանել. սակայն որո՞ւ կրնայինք երբէք մեր միտքը յայտնել, անմիջապէս անթիթ աչօք կը մեռցնէին զմեզ. Խնդիրն հոս չէ, տես թէ ինչէր կան ասոնց հետեւութիւններ. Կա միայն վառակ մը կը խորհէր այս գործին, ես կատարեալ ազգատեսաց մը հարիւր ատիճանի դերութեամբ կը ջանայի գլուխ հանել նպատակը. և յաջողեցանք իսկ, ձեռք բերինք մեր կողմէն ազգին թագը, արդէն միւս ներն արդեամբ գնեցին կրօնքը, և հաւասիկ ազգս ալ առանց կորուստ մը տալու պիտի մնայր կանգուն յառաջագոյն տուած կորուստն ալ մի և նոյն ժամանակի մէջ վրայ շահելով:

Եղգասէր: Պիտի ըսես ամենեւին, ազգատեսաց մը այդպիսի խորհուրդ մը չ'կրնար խորհիլ իր ներքինիդ, դու ազգատեսաց Աստակին կրթնած մատնեցիք ազգը պարսկին ձեռքը և կործանելու աշխատեցայք, սակայն երկնաւորն Երտուծոյ անտեսանելի ար-

գարուծիւնը ձեզի դէմ հանեց ազգասիրաց խումբ մը, որ փայտերու հարուածներով յետս դաձայց ձեր բնդունած Ատուծոյն բազնաց բաւասարող քաւրմերը, արեամբ ներկեցին զինւորաց աչքերը, և էապէս համոզեցին Պարսիկը որ կամ պէտք է բոլոր Հայերը ջնջուին և ապա բարձուի անոնց ազգութիւնն ու կրօնքն, կամ եթէ ոչ պիտի տեսէ Հայուն թէ կրօնքը և թէ ազգութիւնը, եթէ մէկ անհատ ալ միայն մնայ մէջ տեղը: Արդէն մեր յառաջագէմներէն ոմանք այն ժամանակ շատ անմիտ էին, հերիք էր որ Պարսից դուռն իրենց նշան կամ տիրութիւն մը չնորհէր, շուտ մը լուծին տակ գլուխ կը դնէին: Այն նոյն տիրութիւնը կամ նշանով իբրեւ Պարսիկ կը շարժէին և զՀայն անդադար կը ճնշէին:


Յոռաւորութիւն: Ազգատեաց բարեկամ, դուք այսօր թիւ. դարու ծնունդ, դուք ե. դարու գործերէն ինչ լուր կրնայիք հաղորդել իբրեւ ներկայ, և գործողացն ալ գործակից:

Ազգասէր: Սիրիկ բռն (յուսահատին) որ խօսքն աւարտի, չես հասկընար ինչ կ'ըսուի. չէ որ ժամանակին նշանաւորութիւնը գարեբով անջատեալ, բայց խորհրդով այսօր բոլոր նոյա գործերը կը խորհիմք և կը գործեմք. յառաջ ուրնէ ազգաբարձութիւնը ըրինք որ հասկցողները հասկնան. դուք դարձեալ ձեր պաղ խորհուրդները դուրս կուտայք: Հիմա մեր խօսքին թերին լմցնեմք: Հիմայ գործն յաջողուցինք և խնդիրը զերջը պահելու մնաց, կը տեսնեմ ամեն մարդ կը ջանայ թաքը խլել. մէկն հաւատարմութի կը խոտանայ, մէկն իրեն հաւատակցութիւնը կը յայտնէ բարձրաձայն. միւս մը ալ ամենուէն մէկ մէկ անհաւատարիմ գործերը կը յայտնէ զինքը

անմեղ ցուցնելով: Այս կէտին էր որ գլխուն թաղաւ աշխարհիս մէջ գրտնուած զանազան և նորանոր նիւթերով լեցաւ, նորանոր անուէն ինձ կրնէի գեցի և խորհիլ ըսկայ. ազգասէր գնացած էի, ազգատեաց վերագործայ. այսուհետեւ ո՞վ ինչ գիտէ թող ըսէ:

Անհաւատ: Հատ խօսելուն շատ արդիւնք չհետեւիր. եթէ կուզէք և ներելի է մեզ, քիչ մ'ալ մենք խօսիմք և այս խօսքս առաջին և վերջին պիտի ըլլայ: Արդէն քաջ գիտեմք որ երկուսդ ազգասիր շարժումն անդադար է. եթէ այսպէս է, պիտի հետեւեցնեմք թէ ամենն ալ պէտք են շարժել և գործել, եթէ ազգասէրները ճշմարիտ ազգասէրներ չըլլան, ազգի մը վախճանին մօտիւր կ'ընշանակէ այն. քանի որ ազգասէրն ըլլայ, ըստ որում մարդը տգիտութեամբ գրեթէ միշտ կը հակառակի հաւատարմութեան, ազգատեացներ ալ պիտի դան յառաջ: Բայց ասոնց ամէնը գործ և արդիւնք պիտի ունենան թէ ոչ, այն մեր խորհրդեանը նիւթը ըլլալու արժէքը չունի. Վասնի որ մէջ տեղը գանուողներն ազգասէր և ազգատեացներ են, դու ժաբերներու և աւետաբերներու յառաջ գալն անշուշտ է: Թող աւստիք ալ ազատ խօսին, ինչ որ կը բերէ թերագրութիւնը կամ խորհուրդը գործն անխռով մնալն է:

Ահա և կը գիտեն:



Ա Ր Կ Ա Տ Բ

Ա Ր Ի Ս Թ Ո Ն Յ Ի Ի Ս Ի Ն

(Շարունակութիւն • տես թիւ 5 •)

Գետոյն երկայնութեամբ յառաջանալով Սփրօնիմ՝ պարզ և միջին, բայց գեղեցիկ ճարտարապետութեամբ ճիշտ և ուղիղ համեմատութեամբ շինուած տուն մը տեսաւ։ Այնտեղ ոչ մարմարիտն, ոչ սոսի, ոչ արծաթ, ոչ փղոսկր և ոչ ծիրանեայ կահկարասիներ գտաւ, այլ ամեն բան մաքուր և լի շնորհօք, եւ վայելչութեամբ բայց առանց շքեղութեան։ Այլիւրակն մի գաւիթին մէջ կը հոսէր, և կանաչ գորգի մը երկայնութեամբ փոքրիկ ջրանոցք մը կը կազմէր։ Բուրաստանները ընդարձակ չէին, ուր մարդիկներ կերակրելու օգտակար տունկերը և պտուղներ կը գտնուէին։ Պարտիզին երկու կողմէն երկու անտառակներ կ'երեւէին, որոց ծառերը՝ գրեթէ իրենց մօր սցօնքն երկրին սկէս հինօրեայ էին, և սրաց թանցրակիտ ստերը այնպիսի ստուեր մը կամ շուք կընէին, որ արեգակն ճառագայթներէն անգամ անթափանցելի կըլլան։ Այնք սրահի մը մէջ մասնաւոր քաղցր ճաշ մը ըրին, այնպիսի կերակուրներով զորս բնութիւնը պարտիզաց մէջ կը մատակարարէ, և ոչինչ հոն չէր տեսնուէր այն ամէն բաներէն, զորս մարդկանց փափկութիւնը քաղաքացի մէջ սրտնելու կ'երթայ այնքան հեռի և այնքան թանկագին, ասոնց կերակուրն էր կաթ, այնչափ քաղցր, որքան էր Ապօլոնի՝ Ամմեթ թագաւորի մօտ հովուութիւն ըրած ժամանակ կ'թած կաթը, և մեղր՝ որ աւելի ընտիր էր Արիլիայի մէջ եղած Հիպլայի մեղուացի մեղրէն, կամ Հիմեթ լեռան Ատտիկէի մէջ, կային

նաեւ պարտիզին կանանչեղէններէն և պտուղներ, զոր նոր ժողոված էին։

Նեքտարէն աւելի զովայուցիչ գինի մը կը հոսէր մեծ ամաններէն՝ քանդակուած բաժակներու մէջ։ Այս սակաւապետ և ժուժկալ, բայց քաղցր և խաղաղիկ ճաշի միջոցին, Արիսթոնօիւս չը կամեցաւ երբէք սեղան նստիլ։ Այս և առաջ ձեռքէն եկած ջանքը զանազան պատրուակներով ի գործ դրաւ, իւր համեստութիւնը ծածկելու համար, բայց վերջապէս երբ որ Սփրօնիմ ուղեց զայն ստիպել, յայտնեց որ ինքը երբէք չը պիտի սեղանակից ըլլայ թառան Ալփինի, որուն այնքան երկարատեն միեւնոյն սրահին մէջ ծառայած էր։

Նշաւասիկ կը սէր Արիսթոնօիւս Սփրօնիմին, այն վայրը՝ ուր այն ժամատուն ծերունին սովորութիւն ունէր կերակուր ուտելու, ահա իրեն թարեկամաց հետ խօսակցելու տեղը, ահա իրեն խաղացած տեղը, ահա այն վայրը, ուր նա կը ձեմէր Հեզիօս և Ալմէր կարգալով, ահաւասիկ վերջապէս այն վայրը, ուր նա գիշերը կը հանգէր։ Այս պարագաները յիշելով իրեն սիրալը կը խանդաղատէր և արտասուքը աչքերէն կը հոսէր։ Ճաշէն գինի Արիսթոնօիւս ցուցուց Սփրօնիմին այն գեղեցիկ մարգագետինը, ուր իրեն բառաչող բազմաթիւ հօտերը կը թափառէին գետոյն ափանց վրայ, յետոյ նշմարելին ոչխարաց հօտերը որք պարարտ արօտներու վրայ արածելէն կուգային, մայրերը որք շարունակ կը մայէին և լի էին կաթով, իրենց փոքրիկ և ցատկրտող գառանց հետ հոն կընթանային։

Արիսթոնօիւս՝ Սփրօնիմին ցուցնելով այս տունը, գերինները, խա-

չինքները և երկիրը որ այնքան պըտ-
զարեր դարձած էր բազմաճան մշտ-
կուլթեամբ, անոր այս խօսքերն ըսաւ .
« Հա՛տ ուրախ եմ զձեզ տեսնելով
ձեր հայրենի հին ստացուածոց մէջ
որուն վրայ ահաւասիկ ես գոհ եմ
ամենայնիւ . որովհետեւ ձեզ ժա-
ռանգել կուտամ այն վայրը՝ ուր այն
քան երկար ժամանակ Մլխինն ծա-
ռայեցի, խաղաղութեամբ վայելէ
այն որ անոր կը պատկանէր, ապրէ
երջանիկ. և պատրաստէ Քեզ աւելի
քողքը վախճան մը քան անորինը : Մ-
րիսթոնօիւս՝ մի և նոյն միջոցին անոր
պարգեւ մը ըրաւ այն բարկերէն, ու
րինօք վաւերացեալ բոլոր հանգիստ
կատարութեամբ, և յայտնեց որ ի-
րեն ժառանգութենէն բոլորովին կը
զրկէ իւր բնական ժառանգները, եւ
թէ անոնք իւր բարերարին՝ Մլխինի
թոռան ըրած պարգեւին գէ՛մ գնե-
լու չափ ապերախոս գտնուին : Բայց
այսքանս ալ Մլխիսթոնօիւսին սիրտը
գոհացնելու համար բաւական չէր :
Իւր տունը տալէն յառաջ, զայն նոր
կարասիներով բոլորովին կը զօրգարէ
որո՞ք պարզ, ճշմարտապէս համեստ և
վայելուչ, բայց մաքուր և հաճոյ էին :
Հետեւորանները Բեմսորի հարուստ
պարգեւներով լեցուց և ժառանգե-
րը Բիսոյի գինիով, որն որ Հիպէի և
Կոնիսմեարի ձեռամբ մեծին Մլքամազ
գայ սեղանին գործածուելու արժա-
նի է . փրամենն ան գինի ալ բաւա-
կան լեցուց հանգերձ Հեմեթի եւ
Հիպպոյի մեղրի առատ համբարներով
Մտակէի իւզով, որ նոյն իսկ մեղրին
չափ քողքը է : Մտնց վրայ յաւել-
ցուց նաեւ շատ մը նրբաթել և ձիւ-
նէն աւելի ճերմակ բուրգեր, որք
այն փափուկ ոչխարաց կողպուտնե-
րն էին, որ Ալիկիլիայի պարտրտ ա-
րօտներուն մէջ և Մլքատի լեռան վը-

րայ կը ճարակէին : Մհաւասիկ այս
վիճակին մէջ տուաւ իւր տունը Սօֆ-
րանիմին ծերունին Մրիստոնօիւս, ա-
նոր տուաւ նաեւ յիսուն տաղանդ
դրամ, և իրեն ազգականաց այն ինչ
քերը պահպանեց, զորս Կաղու մէն
թերակողայն, որ Իզմիրի շրջականե-
րն է, Լիպետէի և Վօլօֆօսի մէջ
ունէր, և որք բաւական մեծ արժո-
ղութիւն ունէին :

Պարգեւատուութիւնը լիննալով
Մրիստոնօիւս նաւ մտաւ, Իօնի վերա-
դառնալու համար : Սօֆրանիմը՝ այս-
պիսի անհամեմատ երախտեաց և բա-
րերարութեանց վրայ հիացած և գո-
րոված արտասուածօր աչօք մինչեւ
նաւը անոր ուղեկցեցաւ, զայն միշտ
իրեն հայր կոչելով և իւր բազկաց
մէջ սեղմելով : Մրիսթոնօիւս յա-
ջող և երջանիկ նաւարկութեամբ մը
իսկոյն իւր տեղը հասաւ . իրեն ազ-
գականներէն և ոչ մին համարձակե-
ցաւ գանգատել այն պարգեւին վը-
րայ, զորն որ Սօֆրօնիմին ըրած էր : Ես
իրը իմ վերջին կամքս, կ'ըսէր նա կտա-
կիս մէջ հրաման ըրի որ եթէ ձեզմէ մէ-
կը ընդգինանայ այն պարգեւին զոր
ըրի Մլխինի թոռանը, բոլոր իմ ըս-
տացուածներս ծախուին և Իօնիի ազ-
քատաց բաշխուին :

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՌՅ

Վաթսուն տարիէ ՚ի վեր յուսա-
հատութեան և մահուան իրաւուն-
քը փաստաբանուեցաւ, այժմ կը ձեռ-
նարկեմ ես յուսոյ իրաւունքը պաշտ-
պանելու : Բան մը զիս կը դրդէ ձայ-
նըս բարձրացնել և իմ դատս յատեան
կոչել : Մէ տաղանդացոյ մարդու ուղ-
ղեալ սա խօսքերը լսելէն . հասարակ-
բան չ'ունիմ, յոսսալու բան չ'ունիմ, և ան

Յէր Բորս Դրիշէ պարսկան լէս : Գու-
ցէ վերջապէս՝ հաւատոյ, թերեւս
իր վեհ ծագումը մոռնալով՝ հասնի
մինչեւ այն կէտը, որ ինքզինք համա-
րի՝ արդարեւ՝ իրեւն հորձարանաւոր հոյս
մը. որ զինքը շարժապաղ առարկաներէն և ի
պիպոյից միայն՝ մասց լոյս կ'ընդունի, մինչեւ
ըսել ապականութեան՝ Դորս իմ մայրս էս, և Դ-
րսանց՝ ինչ էլ Դորս իմ էս և Դորս. դուցէ
իրականապէս համոզուի թէ՛ առ Դ-
րարիչն ունեցած որ և է պարտաւա-
նութենէ ազատ է. և գուցէ իր փա-
փաքներն ալ գերեզմանին դուռը կանկ
առնուեն, և անսանոց վրայ ունեցած
չնչին առաւելութեամբ գոհ՝ անիշա-
տակ անցնի անոնց պէս, և իրեն պա-
տիւ համարի միայն ունայնութեան
իշխանական գաւազանը ունենալ : Լոյս
կ'ուզեմ զայն ջախջախել իր ձեռքին
մէջ. թող հասկնայ իր ինչ ըլլալը, թող
ուսանի իւր մեծութիւնը, ինչպէս
նաեւ. իւր հպատակութիւնը : Եթէ
ճիշդ եղաւ տիազսները ջնջելու. զոր
փորձ : Կան միշտ, և ցոյց պիտի դը-
րուին : Ետնք մարդու բնութեան
մէջ գրուած են. ամեն գար. նաեւ
ամենէն մոլիններն իսկ՝ զանոնք ըն-
թերցան, ձայն տամ՝ անոնց՝ որ ե-
րեսան և ինքնին հաստատուն թէ՛
ճշմարիտ կրօնք մը կայ. յի պիտի հա-
մարձակի զանոնք ի գերեւ հանել, և
անոնց վրայութեանը հակադրել իր
առօրեայ խորհուրդները : Տեսնենք՝
ով պիտի համարձակի այժմ իսկ, երբ
զարթուցանեմ այն ազգերը՝ որ ան
հետազան, և գումարեմ այն ժողը
վուրդները՝ որ այլ եւս չը կան, որ
իրենց աճիւնէն կանգնին և գան տալ
վիայութիւն՝ ի պաշտպանութիւն ի-
րաւանց Ետուածոյ և անմահ վիճակի
մարդոյ :

Եւ ինչու կարնչի : Ո՞վ դատապար-
տեց զինքը ինչով կրնայ հաստատուիլ

թէ անիկայ իւր էութենէն պիտի
դադրի : Ո՞րթէ այս մարմինը՝ որ կը
լուծուի, սա ոսկերատիքը, սա աճիւ-
նըն է մարդը : Ոչ, ոչ, փիլիսոփայու-
թիւնը կարի իսկ կը վազվազէ գերեզ-
մանը կնքելու : Թող նա մեզի ցոյց
տայ ուրիշ մասունքներ մեր Բանին մէջ
և այն ատեն պիտի հաւանինք թէ
լուծանելի է : Իմաստասիրութիւնը
այս բանը չըբաւ, և երբեք չը պիտի
կրնայ ընել երբեք չը պիտի կրնայ բաժ-
նել արդարութեան գաղափարը, և ոչ ալ
ըմբռնել զայն իրեւն բաժանեալ այն
պիտի զանազան մասունքներու, որոնք
իրարու մէջ մեծութեան, ձեւի և
հեռաւորութեան վերաբերութիւն-
ներ ունենան : Կամ մի է արդարու-
թիւնը, կամ չը կայ բնաւ : Իսկ փա-
փաքը, սէրը և կամքը՝ որոշ կ'ըմբռ-
նուի արդեօք թէ նիւթի հանգա-
մանք և տարածութեան սրտագանե-
լուն եղած ըլլան : Երոշակի կը տեսնուի
արդեօք թէ իրականապէս պարզ ըզ-
գացմունքը՝ բաղկացեալ տարրներու
կերպ մը դրութենէն ծագումն առած
ըլլայ, և թէ անիկի գոյութեանց խառ-
նուելովն՝ առաջ եկած ըլլայ գործն
գոյութիւն մը, կարող ճանաչելու.
կամեալու և սիրելու : Ո՞վ հիմնա-
լեայ գործարանաւոր կազմութեան :
Սա տիպը՝ զոր Բորս տակ կը ձմեւմ
միայն ջերմութեան, իւր մասանց նոր
կարգադրութեան մը կը կարօտի ու-
րեմն, որ իմացական ըլլայ, երկինքը
գրաւէ անոր օրէնքները հաշուէ ան-
բաւ միջոց ձեռքէ՝ անցնի ոչ միայն
տեսանելի, այլ և երեւակայելի աշ-
խարհներէն ու անդին՝ փնտռելու հա-
մար անեղծութիւն մը՝ որ բաւական
ըլլայ զինքը գոհացնել. շաճանթաղ ու
րուն տիեզերք չէ բաւական :

Երգարե կը ցաւիմ այս ցած պատ-
րանայ մէջ թարթափող տկար մասոյ

վրայ, բայց թէ տակաւին այդ վիճա-
կը իրենց հաճելի երեւի, եթէ սթա-
փեւէն կը խորշին, իրենց՝ ինծի աղ-
դած ստեղծմը և դրուանքը բացառ-
բերու խորք մը չեմ կարող գտնել:

Սակայն ինչ կ'ըսեն, վերջուժեան
կը կռնէն զգայարանները. կ'ուզեն
որ կեանքը դադրի այն տեղ՝ ուր ա-
չաց տեսութիւնը կը դադրի, նման
այն տղայոյ՝ որ արեգակը հորիզոնէն
վար իջած տեսնելով՝ զանիկայ յաւի-
տեանս մարած կարծեն: Բայց ինչ,
միթէ լուծանելի գործարանաց տը-
խուր տեսարանէն զարնուող միայն
իրենք են: Սթէ գերեզմանի լու-
թիւնը լսող իրենք եղան առաջին:
Վեց հազար տարի կայ որ մարդիկ
կ'անցնին մարգուս առջեւէն իրրեւ-
ստուեր, և սակայն մարդկային սեռը
զգայարանաց պատրանքներու գէմա-
մենակարող օրէնքով և անտեսանելի
զգացմամբ մը պաշտպանուած՝ մահ-
ուան մէջ ուրիշ բան չը տեսաւ, բայց
եթէ գոյութեան փոփոխութիւն մը
և սոսկալի հաճոյքներով զեղծեալ բա-
նի մը մարերու ընդգիմութեան հա-
կառակ՝ պահեց միշտ անմահութեան
փոքմ աւանդը՝ իրրեւ ընդհանուր
բանականութեան վարդապետութիւ:
Արդ զայն մերժողները՝ լծող զատը-
ւին մարդկային ընկերութենէն՝ եւ
երթան մեկուսի ճարակ տալ որդանց
սիրտ մը, որ արդարութեան և ճիշ-
մարտութեան սիրով կը արտփէ, եւ
միտք մը, որ զ'շտառած կը ճանաչէ:

(Լաւնէ)

Թարգ. Դ. Գաղ.

Սափաւ Սաղ. 3.

Սափաւ փառ:

ԴԱՅՏԵԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵԾԱՊԱՏԻԻ ԺՈՂՈՎ

(Շարունակութիւն, տես թիւ (5)):

Եթէ առանձին հանգամանքները
շատ ընտանիքներու և առ հասարակ
այսօրուան ընտանեկան յարաբերու-
թիւնները անհամար դէպքերում
հարկաւ որ են կացուցանում աղջկե-
րանց վարժարաններին և թոշակարանե-
րի (Densionate) տնային զարդացման տեղ
փոխարինելը, այնու ամենայնիւ նոյն
չափ էլ շատ անգամ հանգստութեան
և անտեսութեան գործ է, յարա-
բերելով դէպի այն, ինչ որ սովորու-
թիւն է դառել, որով ծնողաց բնա-
կան պարտաւորութեան զգացմունքը
կորչում է: Յետոյ հեշտութեամբ
ծնողները՝ զարգացումը այն բաների
կարգին են դասում, որոնց մասին հո-
գացողութիւն անելը՝ իրանց կը խը-
նայեն եղած վարժատուները. և
այսպէս կարծում են թէ շատ բան
են արել, երբ փող են տւել: Օտը-
մանալի է, թէ ինչ յառաջադիմու-
թիւն է արել այստեղ էլ աշխատու-
թեան բաժանումը և գործատարի
լուծումը:

Իւստուս մեօղերը գովաբանելով
տառած է թէ՝ հին բարի ժամանա-
կին իւրօքանչիւր տուն դեռ իրա
սեպհակուն ոտտայնակաց սեպհա-
կան (ճախարակ) (Vebstuhe) ունէր
գոնէ իրա ժամանակին խոնոք (Spin-
rocken) պակաս չէր, և տան թխած հա-
ցը և եփած կարկանդակը (Ruchen) ամե-
նից համով էին: Վ՛լ չի խոստովանիլ
թէ՝ քաղաքներումն էլ մի մեծ օգու-
տը այնտեղից էր, որ մարդիկը և մե-
քենայքը տանից դուրս զանազան տե-
սակ գործեր են վերառնում, որոնց
մասին հարկաւ պիտի իւրաքանչիւր

տնային կառավարութիւնն հաւար , գործ դնելով շատ ժամանակ և զօրութիւն : Բայց ի հարկէ շատ ախտ տրու է , որ այս ճանապարհով ընտանիքներում միշտ աւելի տարածում է հեռանալու և այնպիսի պարտաւորութիւններն էլ վախճելու միտքը , որոնք ընտանիքներին մերձ են բնականաբար և գլխաւորապէս :

Վարժարանական զորդացու մը միշտ կարողացել են գործ դնել միայն սակաւները . բայց աւելի բարձր վարժարանի համար միջոցները աւելի շուտով են հոգացուած : Գարեբով կային Գիւմրիէնէրը և նրանց հետ էլ Կղզկերանց միջակ վարժարանները . Կամաց կամաց կանոններին էլ երեւցաւ մի աւելի մեծ կրթութեան հարկաւորութիւն և հասարակական վարժարանների եղած յարաբերութիւնը էլ կարգին չթւեցաւ և կառուցւեցան Դոսաթիւնի Բարձր վարժարաններ որ կանանց էլ առաջուանից աւելի բարձրացնեն ժամանակի ընդհանրական կրթութեան աստիճանին վրայ : Այս անուներ այս դարու քսաններորդ տարուց առաջ՝ առաջ չէ գալի : Բարձր դասակարգերի (մեծատունների) երեխայների համար , առաջնոց եղած վարժատունները շատ պարզ ձեւ ունէին ուսանելու , և այն տեղ էլ տան և չորս տարեկանից բարձրը շատ հաղիւ էր գնում : Դուռնորների աւելի կատարեալ կրթութեամբին այն ժամանակը զանազան կերպով հոգում էին էին հենց ընտանիքում : Այս աւելի դժուարացաւ կանանց կրթութեան վրայ բարձրացած աղաղակներով և սակաւ նախապատիւ երեւեցաւ բոլորովին վարժարանին և նրա կանոնաւորւած կարգադրութիւններին թողնել այս հո-

գացողութիւնը : Կղզկերանց վարժարանները ընդարձակեցին իրանց ուսման ձեւը և իրանց դասատան կարգերը և անուանեցան Դոսաթիւնի Բարձր վարժարաններ :

Այս վարժարաններին ձեռնարկելը աւելի առաջ եղաւ , քան թէ մարդու զգացէս մտածիլ կարողացան , թէ ինչ է այսպիսի վարժարանի սեպհաւ կանոնութիւնը և ինչ նրա զանազանութիւնը տղերանց բարձր վարժարանից : Շատ որոշ կարելի է տալ , թէ ինչ է գիւմրաղիւմը , և ինչ պիտի լինի , բարձր դաստիարակների բարձր վարժարանի գաղափարին վրայ թափոււորումէ դեռ շատ մթութիւն և որոշեալ կողմնւած չ'ունի : Կղզկերանց վարժարանի ամբողջ էութիւնը նման է մի այդու , որի մէջ մեծ հոգացողութեամբ կապած անունների մօտ՝ դեռ շատ վայրենի բուսած տեղեր էլ կան . այսպէս էլ է իսկապէս մի արհեստական կանոնաւորութիւն հաւանակ ուղղակի այս սահմանում յաճախ շատ բարեգործական պարզ բնականութեան :

Դաստիարակների բարձր վարժարանները կան և գրաւում են այն բոլորի մասնակցութիւնը և ուշագրութիւնը , որոնց օրտումն է աճող սերնդի բարօրութիւնը : Վարդ չպիտի կարծի , թէ ընկերութեան պարտաւորութիւնները և միւս կարգերի յարաբերութիւնները ճանաչելու համար աղջկերանց անհրաժեշտ հարկաւոր է այսպիսի վարժարան գնալ : Բայց մարդ պիտի խոստովանի թէ քանի որ մի երեխայի համար տնային դաստիարակութիւնը և զարգացումը օգտաւէտ է , միւսի համար շատ անգամ վարժարան գնալը այն նախապատուութիւնը ունի , որ առհասարակ այսպիսի վարժարանները ժա-

մանակի այժմեան հանդամանքներին նայելով՝ անհրաժեշտ են դառել եւ շատ դէպքերում մի մեծ բարեգործութիւն են, որը էլ աւելի կը մեծանար, եթէ ծնողները կամենային վարժարանին աւելի օգնել և երախտանց մասին տուրքը միարանակաւ համարիլ, որը կարծաւ է շարունակաբար դէմ առ դէմ բացատրութեան:

Այժմ բանը կարող է միայն ներանում լինիլ, որ միշտ աւելի պարզ բնութիւն, սահմանաւի և աւելի որոշ իրադրութիւն, ինչ որ անելու են և կարող են դուստրների բարձր վարժարանները: Այն ազգու միտքը և սէրը, որը Գերմանիայում մանկավարժութեան բոլոր խնդիրներին է արդուել, այս սահմանումն էլ անուրանալի է: Այս տեղ քանի տարիներով եղած յառաջագիմութիւնները գանազան վարժարանների շրջաբերական յայտարարութիւններում՝ եւ գեղեցիկ վիայութիւնները միւս գրութեաններում աչքի առաջի են, որոնցից միեւնոյն ժամանակ ստաջանում է, թէ մարդ չը պիտի խաբուի գեւեւս յաղթելի արդեղքների և գրթութեաններին վրայ: Այսում եմ նրանցից մի քանիոր ցոյց տալ որոնք մասամբ դուստրների բարձր վարժարանի էութեան մինչ արդի զարգացման մէջ գեւ մի կողմ չ'են որոշուիլ մասամբ պիտի նայուին ինչպէս վերաբուսեալ բաներ (Aussicht), որոնք մի քանի վարժարաններում գտնուում են առանց ամբողջ ձեւի արժանաւորութեանը մնաս տալու:

Իրական վատ դրութիւններին պատկանում է ամէնը, ինչ երիտասարդների վարժարանների օրինակից չափից դուրս կախումին վերաբերում է: Չեմ յապաղում շուտով այս

տեղ հաշուելու երեխանց բազմախումբ ամբիտումը, ինչպէս ազգիւրանց շատ վարժարաններում և դաստաւաններում լինում է: Կանանց բնութեան հակառակ է այս: Տղերանց հաճար առանձին զարգացումը հազիւ անգամ է օգտուէտ, նրանք պիտի միանգամ կարգ մանեն և անգամ դառնան և պիտի վաղ սովորին ընկերութեան կանոնը ձանաչել և պահպանիլ: Աղջկերանց շուտով վերատալի (Verletzliche) հոգեկան բարութիւնը հեշտութեամբ, առանց միտով՝ չի դիմանալ մի այսպիսի օրական բազմազու մարժողովի: Այնու ամենայնիւ ունինք այն միջակ կարգի լու վարժարանների հետ միտան, որոնք իրանց ուսանելու ձեւումը և ժամումն էլ կանանց յատկութեան պահանջած չափը պահպանում են, շատ վարժարաններ էլ չափից դուրս աշակերտութեան հիմնով, չափից դուրս դաստաւաներով, չափից դուրս աւարկայնեքով, և չափից դուրս ուսուցիչներով:

Շատ վարժարաններում աշակերտութեանների թուի անհամեմատ բազմանալու պատճառը նրանումն է, որ շատ ծնողներ, որոնց դուստրների համար տարրական կամ միջակ վարժարանը վաղէս բաւական է, չ'իմանալով կամ անախառապէս մեծ արժանաւորութիւն են տալիս, եթէ մի քանի ժամանակ իրանց երեխանց այն պատուին և օգտին են մասնակից անում, որին յոյս ունին դուստրների բարձր վարժարանից, որով միայն երեխայը կենցաղավարութեան մէջ շատ անգամ մտրոււմ են: Արեւմտեան միեւնոյն հիմունքն է այնպիսի վարժարանների բազմանալում, որանցով փոքր քաղաքների հասարակութիւնները չ'են կամենում միւսաներից յետ մնալ:

Իրան վարժարաններ 400, 500, 600, աշակերտութիւններով: Սորդիւքուրք քաղաքի դուստրներէն բարձր վարժարանը 800-ից աւելի ունի այժմ: Դասակարգուած ատոմներն էր, որոնք երեխայները բարձրանալով պիտի անցնին մինչեւ 68 10 ին: Աշակերտութիւններ թիւը հասնում է մօտ 50 60 70 ին ստորին և միջին դասատուներուն, և վերջիններուն էլ շատ անգամ 30-40 ից բարձր է զը նուսմ:

Այլ մի եզրակացութեան չէ կարծառում, թէ էլ կարելի լինի խօսիլ այսպէս մեծ վարժարաններում նուախայիշեալ ընտանեկանութեան վրայ և այսպէս բազմաթիւ դասատուներում անհատացեող (Individualiserende) դաստիարակութեան, որ ազդեցեանց աւելի անհրաժեշտ է, քան թէ տղերանց. յետոյ թէ իսկական զարգացումը և նրա մասին՝ տան և վարժարանի միտման ներդրութիւնը՝ այսպիսի հանգամանքներով անշուք զբաղարանում են, այն, շատ դէպքերում էլ անկարելի լինում է: Այնպէս շատ անգամ խախտիչ են զարգացուցիչ ներդրութեան միութեանը՝ այն իրար հետ միասին դաստառ վարժապետների յաճախ փոփոխուիլը և մեծ թիւը, որոնցից շատերը իւրաքանչիւր վարժարանում միայն մի քանի ժամերով են զբաղւած:

Ինչ որ ուսանելու առարկայներին է վերաբերում, սակաւ առ սակաւ այնքան են շատացել դուստրների մի քանի բարձր վարժարաններում, որ սրանք կանանց իրական (բեալական) վարժարաններ են դառել: Այն քանի ցուցակներում 12 զանազան առարկայներ են գրուած և իւրաքանչիւր դաստառում շորթթախան մօտ 34 ժամ ուսանելու: Բարձրանալով այն

առարկայներին են հասնում, որոնք առ հասարակ ազդեցեանց վարժարանի միւս կողմին են գտնուում և անպատճառ առանձին զբաղման թողնելու է: Տղերանց բարձր վարժարանները արդէն երկար ժամանակից հետէ չեն կարողացել իրանց սրտնայնել առարկայներին շատութեանց: Այն տեղ վրայը բաւանում է վարժարանների զանազան տեսակով՝ և այն հովանաւորութեանը, որը ամեն տեղ թէ գի-մաղ-մում և թէ իրական վարժարաններում աշակերտ անձեական ջանասիրութեան վրայ է. այս պատճառով էլ պատահում է, որ այն տեղ մի քանի բարձր դաստառներում անդրայլ միակողմանիութեամբ զբախաւորանքս մի կամ քիչ բան են առնում, որպէս զի նրանով հարկաւոր բաները առաջ տանեն: Աղիկները իրանց բնութեան համեմատ բոլորովին ուրիշ յորաբերութիւն ունին դէպի առարկայները և անձինքը: Տղայն առաջ բանն է ուղում և նրան հետ էլ վարժապետին պատուում է թէ տեսնում է, որ նա իրան օգնում և բարին կամենում է: Աղիկը շատ դէպքերում աւելի աշխատաւոր է վարժապետի, քան թէ բանի համար, որովհետեւ նա վարժապետին սիրում է, աշխատում է անխնայ յաւարով նրա բուռնականութեան վրայ: Հետեւի այս խիստ անձնատուր լինելուն՝ միանում է պարտաւորութեան մի երկուդալի զգացմունք և պատույ մի եռանդոտ ցանկութիւն, որը ամենազգալի կերպով կը գրգռուի շատ անգամ գովասանքներով և պարտաւանքներով. նոյնպէս և տղերանց վարժարաններից փոխ առած այս կամ այն նախանձը շորթթախ (Certiren) Լատներէն (Certare) և այլ միջոցներով:

Պիտի շորթթախի

ԴԱՏԱՍՏԱՆ ԸՆԴԴԷՄ ՔՐԻՍՏՈՍԻ

Ղշմարիտ պատկեր և օրինակ անի-
րաւ դատաստանին ընդդէմ Քրիստոս
օր, որ ի վէննայ ի ներքոյ երկրի ի
վէմ քանդակեալ գտաւ, և ըստ այնմ
գաղափարի զգատճէնն օրինակեցար
առանց այլայլութեան, որ է այսպէս :

Սարէս

Բարձրութի մէնջ զմտորեցուցին,
զ ի կորուստ ծնեալն Հայրենեայ :

Լոյիէր

Եթէ արդար եւս իցէ ի մահ գա-
տեսցի, քան զժողովուրդն քարոզու-
թեամբն մտորեցուցէ :

Նիկողեմոս

Սթէ օրէնքն մեր դատին զոր,
եթէ չըլեն ի նմանէ կամ չը գտա-
նեն ինչ ի նմա :

Տիարաբխա

Ըրդ՝ մտորեցուցանէ զժողովուր-
դն, պարտաւոր է մահու :

Յովքաւ

Բնդէր թողումք զայրս զայս, զի
արժանի է մահու :

Յովսէփ արեւմաթացի

Ըրդարեւ պատուհասակոծ լինիմք,
եթէ ոչ որ իցէ ընդ ամենայն քաղա-
քըս, որ զայր արդար պաշտպանեսցէ :

Սապիմք

Թէ արդար իցէ և թէ անիրաւ,
բայց զի ոչ հնազանդեցաւ օրինայ
ձերոց, չէ արժանի կենաց :

Յովսափաթ

Կտակեալ և կռիւնդեալ ի շղթայս
յաւիտեան մնացէ :

Պողէմէոս

Եթէ արդար է և ոչ անիրաւ, ըն-
դէր ապա յապաղիմք, և ոչ վաղ-
կի ի մահ կամ յաքսորս դատիմք :

Տիբար

Օրէնք ոչ վտան պըրց, եթէ չէ վտան
չարագործացն է հաստատեալ. վտան
որոյ խոստովանեսցի այրս այս զյանցա-
նըս իւր, և ապա դատապարտեսցի :

Բարքարար

Օ մտորեցուցին՝ որ զհայրենին և
զամբոխն խռովեցուցանէ, բառնալ
պարտ է :

Ըֆիսա

Յանցաւորն՝ չէ տնձանօթ պատ-
ճառաւ ի մահ մատնեալ :

Թեբայ

Եւ է զնա յաքսորս դատել կամ
առ կայսր առաքել :

Ղամէք

Ըյսպէս սպառնացուք, զի մի
հակառակեսցի մեզ. ապաթէ ոչ հը
նազանդեսցի, պատժեսցուք :

Սոլքաթ

Ովնչ օրէնք զանպարտն երբէք ի
մահ մատնեն, և զինչ ապա մեղաւ
այրս այս :

Թոզմոթիմ

Բնդէր եղան օրէնք, եթէ ոչ պա-
հանին :

Սխալ

Եթէ արդար ոք է, դարձցուք առ նա, ապա թէ անիրաւ հանցուք ՚ի մէնջ:

Բարուն

Բայց ընդէր եղաւ օրէնք, եթէ ոչ զի պահեսցի:

Քահա աշապետն Հրէից
վճիռ, կամ մարգարէութիւն

Այս գիտէք բնաւ երբէք զինչ խնդրէք, զի լաւ է առն միջ մեռանիլ. քան ամենայն ժողովրդեան կորնչիլ:

Սխալ բորոտն

Օգր օրէնս ունի ապա մոլորեցուցիչն:

Պիղատոսի պոնտացոյ վճիռ,

Քաւեալ եմ ես յարենէ արդաւորոյ այդորիկ, առէք ՚ի ձեզ, և ձեզէն դատեցարուք:

Ի ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՏԻՆ

Գերագոյն ոսկիաջահ խորհրդալիր էին պարգեւաց անօթ գել ընտիր, Անսկիզուն էին շնորհաց որդեգիր Միածնին փառաց ժառանգ

չու տաժիր:

Բաբունոյն բարւոյ շառաւիղ ընդ բեալ,

Հրոյն սիրոյ բոց ՚ի բեզ բորբոքեալ Գեաւիւք արտասուացդ աշխարհս ծովսցեալ,

Այժ երամակ հօտս յայն սպիտակացեալ,

Իսկուհւոյն սրբոյ անճառ սիրահար Ի սէր սիրելոյն մետուզիեան կամար,

Առ տեսքո եկին զոյգ արփիաբար

Անհաս մանուշակն վարդն

անուշարար:

Գազաթ սուրբ տեղւոյն փայլակն աննրման

Եջ յառաւօտու ՚ի գիրկ մաքրական Բակ առեալ ՚ի շող լյսն անեղական Երկակի ՚ի դէմս ընդ զանազան:

Ուխտիւք վտակաց արիմամբ

զմայլեալ,

Յորդահետ գետոց անդ յէն

բզխեալ:

Երկնակի հոգւով խալառ

յորիացեալ

Քան զամենեւեան գերազանց

գտեալ:

Ի նեական լուսոյն օթոց հրաշաւոր

Ազքանաղեանս տան ձիր զարմա

նաւոր:

Զմատեանդ մեզ ձօնեալ բանս

աղերոաւոր

Առ սէրդ մեզ նպաստ ով տէր

սուրբ Գրիգոր:

ԺԱՄԸՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Լմոյս սկիզբները դարձեալ կա տարուեցան տէրունական հանդէսները սուրբ Երուսթեան տաճարի մէջ ամենայն խաղաղութեամբ. արդէն գիտցողները քաջապէս գիտեն որ ամէն քրիստոնեայք ալ իրենց այս տարեկան հանդէսներու խաղաղութեամբ անցնիլը Տերութեան կողմանէ եղած զգուշութեան միացն կը պարտին: Վասն զի որչափ որ եկեղեցին և կրօնը կ'արդելուն ժողովրդեան ընկերութեան մէջ խռովութեամբ գործելու, դարձեալ ժողովրդեան խաժամուժ ամբօխ տգիտութիւնը տեղի կուտայ այն տգեղութեան կեղծցւոյ որբավայրին մէջ

որոշուհեղուն Ինչու՞նք չախանձախորն
դրու թեամբ , ըստ որում Յուսայ
եկեղեցականներն իրենց ժողովուրդ-
դեան այնպէս կը բարոյէն որ սուրբ
Յարութեան տաճարին մէջ իրենք մի-
այն կրնան թափար դառնալ և գե-
րեզմանին վրայ պատարագել և ու-
րիշ ազգ մը կրրէք իրաւունք չունի
հոն պատարագելու : Խաժամուժ ամ-
բոխն ասոր համարուած՝ կու գէ որ միշտ
իւր ազգք տեսնէ նոյն տաճարին մէջ
և երբ կը պատահի որ նոյն խաժա-
մուժ ամբար լի տեսնէ թէ Հայերն
ալ իրենց հետեւակներով (1) մէկտեղ
սւ Վատիններն ալ թափար կը դառ-
նան այն տաճարի մէջ , ուր ծայնա-
ւոր կարգալն եւս իրենց ազգին յա-
տուկ կարծած էին , մէկէն ՚ի մէկ իւր
իրաւունքն յափշտակիչներու ձեռքէ
ազատուլու փութացողներու պէս կը
յարձակէին միւսաց վրայ , որ պէս զի
զանոք վաճառեն դուրս հանեն , և ի-
րենց իրաւունքը միայն վայելեն : Իսկ
միւս ժողովուրդը որ ճշգիւ գիտէ
թէ այս իրաւունքներն ընդհանուրի
է և Յոյն չափ Հայն ալ Վատինն
ալ իրաւանց տէր է այն տեղերու
մէջ , կը ծնէ անոր տգիտական ամ-
բարտաւանութիւնը ընդդիմանալով
անոր դէմ : Ըստպէսով պատահած
է մինչեւ անգամ արիւններ և մահ
ժողովրդեան մէջ :

Իսկ հիմա տէրութեան զօրքերը
կրկենան տարբեր ժողովրդաց մէջ տեղը
և չեն թող տար երբէք իրարու մեր-
ձենալու , մանաւանդ որ Յունաց ազ-
գը դարձեալ այնպէս կը ջանայ հա-

մոզել իւր ժողովուրդը թէ ուրիշ
ազգերը չեն կրնար պատարագել Ս .
գերեզմանին վրայ , և իւր այս սուան
անոնց աչքին երեւան չբերելու հա-
մար կ'աշխատին իրենց ժողովուրդը
դուրս թողալ և ներս չբերել երբ
Հայոց և Վատինաց պատարագի ա-
րարողութիւններն կատարուին :

Վերջապէս թէ այսպէս և թէ այն-
պէս այն հին կամ անցած օրերու մէջ
պատահած ոչ արիւնք և ոչ կոխը
տեղի կ'ունենան այս օրերս :

— Յոսպէէն մինչեւ երուստղէմ
ճանապարհի կառքերը բանեցնել յառ-
պէի երկու վաճառականներ յանձն
առած էին , սակայն վերջին օրերս լը-
սեցինք որ պայմաններէն մէկ երկու-
րին նկատմամբ համաձայնութիւն ե-
ղած չէ կառավարութեան և վաճա-
ռականաց մէջ , որով հիմակահիմա
դարձեալ ասպարծ մնաց ճանապարհի
կառքերը :

Իսկ հիմա արդէ Վարդիս եկե-
ղեցւոյ շինութիւնը որ աւարտած էր
մէկ տարի յառաջ , հիմա ծեփն սե-
ղանները հանդերձ խաչկաղթ աւար-
տած ըլլալով , նոյն Եկեղեցւոյն օժման
խորհրդոյն կադարումը մնացած է
միայն :

— Իմոյս վերջերը Յոսպէի նա-
ւահանգստին մէջ երկու Ըրօբ նա-
ւավորներ արբած ըլլալով մէկգմկ
վիրաւ որած են :

— Կալիթայի Կաշիկեան Տ . Յով-
հաննէս Կաշիկի աւագ քահանայի
Ս . Ըթուոյս թանգարանին զրկած
ձեռագրացը մէջ , որ ծանուցուած են
Սիօնի միջոցաւ , ձեռագիր ընդհան-
րական մի եւս կայ , որ նոյն միջոցին
խաղմամբ մոռցուած է հրատարա-
կելը : Թանգարանի վերաբերեալ այս
պիսի նաւերները մեծ չորհակալու-
թեամբ կ'ընդունուին և կը հրատա-
րակուին :

(1) Յունաց և Վատինաց թափարները կը
չըմադային առանձին առանձին , և իրենց հետե-
ւանքն այսինքն դառնալից ազգերն չեն կարող թա-
փար դառնալու , իսկ հայոց թափարը դառնալու
ժամանակ , Հայերն իրենց հետեւող ալ Վատին և
Խոյսին իրենց առանձին թափարակներով չորջ
կը բերեն իրենց ետեւէն , որով առեւիք վսեմ և փա-
ռաւոր կ'ըլլայ Հայոց թափարը քան միւս ազգացը :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՌՈՒԹԻՒՆՔ

ԴԱՍԱԳԻՐՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Համառօտ աշխարհաբար կարեւոր դասագիրք մ' է, աշակերտաց համար զիւրմբոնեղի ոճով յօրինեալ Պ. Ստեփանի փափաղեան: Որուն սկիզբն Հայաստանի աշխարհագրութիւնը դրուած ըլլալով Հայկազանց սկզբնաւորութենէն այսինքն Հայկէն սկսեալ մինչև 1860 ազգային Սահմանադրութիւնը կը բերէ կը հասցնէ Հայոց պատմութիւնը: Այսին մէջ կը պատմուի Հայկազանց տէրութիւնը, երկրորդին մէջ Արշակունեաց տէրութիւնը, երրորդին մէջ Սարգսանաց և Կիւրապաղասից ժամանակը, չորրորդին մէջ Բագրատունեաց տէրութիւնը, հինգերորդին մէջ Ռուբենեանց Թագաւորութիւնը, վեցերորդին մէջ Հայաստանի անիշխանութեան ժամանակէն մինչև մեր ժամանակն այսինքն 1860 թվականը:

Կը ծախուի արժան գնով Պոլիս և ուրիշ քանի մը գաւառներ Երուսաղէմի գրատունները:

ԱՏԵՆԻ ԺԱՄԱԳԻՐՔ

Սիջակ գիրքով ոչ շատ մեծ և ոչ շատ փոքր, խոշոր գրերով. Պէտքունեցող Եկեղեցիներն կրնան գնել աման գնով իմէ Պոլիս և իմէ ուրիշ գաւառները Երուսաղէմի գրավաճառաց քովերէն:

ՕՐԱՑՈՅՑ

1871 ԹՈՒՆ ԲՐԱՏՈՒՐ

Յօրինեալ ի միաբանական ուխտէն Երուսաղէմի և տպագրեալ ի Տպարանի Սրբոց Յակովբեանց Արուսաղէմ:

ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Տ. ՄԻԽԱՅԵԼԻ ԱՍՈՐԻՈՅ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ

Աշխարհի սկիզբէն առնելով մինչև իւր ժամանակը, որ Հորհալի ժամանակն է, պատմութիւնն ըրած է Ս. հեղինակը. հին պատմիչներէն աւելի ստուգապատմաւ ժամանակիցներէն առնելով, պատմութեան վերջը կը շարակարգէ չորս Պատրիարքական Եթովպաց այսինքն Ենիօքայ, Երուսաղէմի, Եղեքսանդրիայ և Եփեսոսի, գահակալող Պատրիարքները մինչև իւր ժամանակ Եռքեայիներէն սկսեալ, որոց հետ կ'աւելցնէ նաեւ Հայոց Կաթողիկոսաց գաւաղանագիրք թագէտ Եռքեայէն առնելով մինչև Երեսն Հորհալի ժամանակը: Արմէ ետքը Պատմութեան հայերէնի Թարգմանողները որ են Վարդան վարդապետ-հայ, և Իշխբահանայ-Երբի, աւելցուած են Կաթողիկոսաց թիւը մինչև Կոստանդին Ս. որոց ժամանակն իսկ Թարգմանուած է հայերէնի Հռովմայի մէջ, Կաւելցնէ նաեւ Հռովմայ Պատրիարքներու ցանկը մինչև իրեն ժամանակը:

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԾՄԷ ԱՆԵՐԿԻՒՂ ՄԸ

Վիւղարաղարի մը մէջ հարուստ մարդ մը կար ողորմած անունով, որ միշտ ողորմութիւն կ'ընէր. ճանաչարհորդներ ալ իւր տունն ընդունելով ձեռքերնուն և տարերնուն ջուր հանելով լուանալէ վերջը կրկեքակրէր, ճանապարհի պարէնն ալ հագարով ճամբու կը դնէր սրտի մտօք ուրախութեամբ, և փոխարէն սրտագին շնորհակալութիւններ կ'ընդունէր :

Այս բարեգործը կամ թէ ողորմած ոգին մէկ հատիկ որդի մը ունէր որդեգիր առած ալ դատրիկ մը, իւր ամենօրեայ խրատն ու խօսակցութիւնըն էր որդւոյը, որ երբ Աստուած տեսնէ իւր ծառային պարտականութիւնները, այսինքն երբ իւր ժամանակը յոսցած յախտեհարմութեան կոչմանն հետզանգէրով հանգչի այնուհետեւ գործելէ, կ'ընէր որդեակներըս, երբ երկուքնիդ ալ տաւանձիւ առանձին երջանիկ ⁽¹⁾ բլլար, ճանաչարհորդին կամ թէ աղբատին պարէնի հագարողութեան երբէք մարէ մի հանէր, և ոչ միայն աղբատաց կաւ ճանապարհորդաց, այլ և ագահներուն ալ և թէ պատահիր, որ ողորմութիւն կը խնդրեն. վասն զի կ'ընէր, անոնք որչափ որ պահեաթի հարստութիւնն ալ ունենան, կ'ըլլայ այնպիսի օրեր, որ անօթի մնան, և դուք այնպիսիներուն ողորմութիւն ընելով ոչ թէ աղահներու ողորմութիւն բրած կ'ըլլար, այլ անօթիներ կերակրած : Այս ոչ մի

այն այսչափ, այլ կ'ընէր և թէ տեսնէք հարուստներ որ իրենք ողորմութիւն ընելու կարող չ'են, այնպիսիներուն ալ ողորմութիւն ընելը բարեգործութիւն է, վասն զի այնպիսիները որչափ որ հարուստ կ'ըստին գործեալ հարուստ չ'են, բայց որում ճշմարտացէս հարուստն այն է, որ վառահէ թէ ողորմութիւն ընելով իւր խնդրը չկրնար հասցնել, կամ թէ չհասնիր : Այնուհետեւ կ'ընէր Աստուծոյ չվստացին ողորմեցէք, և թէ կարենայք գտնել ⁽²⁾ :

Այս անցան շատ օրեր և տարիներ, հասաւ արագալէս և բաղնէն լու վերջիդ, և մահուան զանգակներ կը զարնուէին կարծես երջանիկ ծերունւոյն լսելաց. յաջ և յահեակ երկու կողմերը կանչեց իւր արու և էգ երկու պարկեշտ որդիքը, քաղցր արտասուաց կաթիլներով և երկու տկարացեալ ձեռացը մէջ իւր սիրտունները շոյելով, Աստուծոյ գործութիւնը կը կոչէր սոցա վրայ, և կ'ընէր շտեման երբէք թշնամի ոյն ⁽³⁾ վնասը, Աստուծոյ պարգէւ տմին շտի տշխարհի վրայ ապրելով : Իւր ուրախութիւնին այն տախիճանիէր որ արտասուքը չէին դադրէր, և բայց որում զմիգը կը

(1) ծերունին ինքն գիտէր որ աշխարհի վրայ Աստուծոյ երկիւղն իւր սրտին մէջ չունեցող չկար տակայն ուղեց որ փորձով խաղնէ իւր պարկեշտատունն սրբուն ալ, որ պարգէն միշտ սովորեցած էր և կը տախիճանէր :

(2) Այս ամենապարկեշտ որդիները իրենց երեւելի առարկութեանց աւր հօր մը որդիքն ըլլալնին յայտնելու համար կարծես կը զարմանային երբ թշնամի բաւը դեռ տալին անգամ իրենց երջանիկ հօրը բերնէն կը լսէին միտցէր տար երջանիկ հայրը խօսելու, որ հարցանին ինչէր այն բաւը : Եւ ծերունին աղբուրութեամբ կըլլէր զուշանար անոնց այս հարցուն ընել շատու, որպէս զի գործեալ չարսին և անմեղութեամբ վարեն մարդկային ընկերական վիճակը ամենուն հետ ալ միամտութեամբ և եղբայրութեամբ կենեալուով :

(1) Թերեւս նոյն երկրին մէջ եօթանասուն տարեկանէն վար եղբայրուն ամուսնաւոր չկար, և այն ծերունին որ հարիւր տարեկանէն առաջին էր, իւր երեսունը վեց քառասուն տարեկան օրդւոյը պարգէն կուանդէր :

բռնադատէր չարտասու ելլաւ որդւոցը արտաձեւթիւն չարտաձառ ելլաւ համար, ուստի ոչ կարող էր շարունակ ուրախանալ, և արտասը հեղուլ, և ոչ ալ առանց արտասու ելլաւ իւր խօսքը շարունակել, և Նի հարկէն էր որ հեկեկամքն սկսէր:

Արքային լաւեր կ'ըսէր կը հնչեն ակտնջիւ, մնա՛ բարեաւ իմ որդի, մնա՛ բարեաւ իմ դուստրիկ, ուրիշ աւանդու թիւն մը չունիմ, և թէ ոչ խօսք մը. չմոռում ոչ, բարեք ողորմութիւն ընելը, յիշեցէք Չեր հօրը խօսքը:

Չեռքին մէջ գտնուած կտոր մը թուղթը հազիւ թէ երկնցուցած էր որդւոյն, և գեռ նա ձեռքէն չառած ինկաւ գետինը, վասն զի երջանիկ ծերունին նոյն կէտին էր որ ննջեց յաւիտենական հանգստեան քունը:

Արք իմացան քոյր և եղբայր չէին գիտեր թէ ինչ սխախ բնեն. որ գիտէին դիտուն կողմը քաշուած, երկուքնին իրարու փարած կ'ափսոսային իրենց հայրը. . . երկոյն միջոց չանցաւ, եկան հաւան դրայիներն ու բարեկամները, մխիթարեցին իրեւ թէ երկու որբերը, և հանգիսիւ ու սիրով կ'առարեցին վախճանելոյն յազարկաւորութիւնը: Արքադարձին երբ ամէնքը դարձան իրենց տունը երկու որբերն նոյնպէս իրենց հօրմէն թափուր մնացած տունը, բնականաբար սուգը չէր լսեր, և ամէն օրմայ երեսն ալ կ'արձեռն սգոյ պատառներ էին տարածուէր:

Աւր ուրեմն ներդ օրմեց որբոց որբ տերուն մէջ աւելի բնականին քան թէ բարեկամաց մխիթարականին յորդորող ձայնը, և սկսան խորհրդով գրտնել, որ բանան իրենց երջանիկ հօր դրած թուղթը. ուր նշանակուած էին որդւոցն ընելիքը հօրերնուն մահուանէն վերջը:

Առաջին. Արքա տուիր էր երբէք չը արտաձեւ իրենն մահուանը վրայ, վառըն զի երջանիկ մեռաւ. ըստ սրտմ' մինչեւ իւր վերջին շունջը ողորմութիւն ընել կը փափայէր, և կրցաւ, և ապագայ մարդկութեան յիշատակ մէկ արժանի և պարկեշտ որդի կը փափայէր, արժանացաւ տնտեսելու աւոր հետ նաեւ նմանապէս պարկեշտ դատրիկ մը:

Երկրորդ. Արքա տուիր էր վերստին չմոռանալ ողորմութիւնը ինչպէս որ կը դորձէր իրենց հայրը:

Երրորդ. Արքա տուիր էր որ իւր օւր արտարայքը ուրախութեամբ կը ձգէ իւր որդւոցը, որ աշխատին, փայլեն իրենց բրտինքը և ողորմին, երջանիկ ընելով և տնտեսները:

Չորրորդ. Արքա տուիր էր որ ողնուկը գտնուած պատրաստի աշխատութիւնը այսինքն ոսկին ու արծաթը բաշխեն հասարակաց, ասոր մէկ տասնորդը կը պատուի էր տալ Արքայիցւոյն, չորս տասնորդն աղքատաց չորս տասնորդն աղքատանացը, և մէկ տասնորդն ալ Աստուծոյ չը վախցողի մը:

Չօրը աւանդութիւնը կ'առարեւ իրենց համար մեծ երջանկութիւն սեպեցին այս երկու պարկեշտ որդիքը. սկսան սուգը մէկդի ընել, եւ ճանապարհորդաց և որբոց պղտիկ բազմութիւն մը սկսաւ դարձնալ իւր օրական պարկերը վայելել: Արքայ աշխատութիւնն սկսաւ, և եկեղեցւոյ, աղքատաց և աղքատանաց համար ուրջուած արծաթը բաշխուեցան, մընայ Աստուծոյ չխախցողին տուրքը, սկսան վնասուել և չէին կրնար դանել:

Այս և այն շատ տեղեր հարցուցին թէ ուր կրնայ Աստուծոյ չխախցող մը կենալ և չէին կրնար որոշակի պատասխան մը գտնել, միայն առաջին

անգամ նենգաւորին մէկն ըստծէր , որ Մատուժմէ չվախցող միայն քահա- նայները կրնան ըլլալ , վասն զի անոր ամէն մարդ իկնէրէ աւելի մերձ են . և թերեւս նորա կամքը զխոնարով չեն վախնար : Սխալիտ պատանին անգործ եւ որոշուած արծաթին մէկ տաւ նորդն առած կ'երթայ քահանային որուն տուրով իւր հօր աւանդած պար- տաւորութիւնը կատարած պիտի ըլ- լար , կր խօսի ինչ պատճառաւ ըլլալը , սակայն քահանայն կ'ըսէ որ մենք Մա- տուժմէ այնչափ կը վախնանք , որ գոր- ծերնիս անգամ Մատուժայ վախը սոր- վեցնել է , ուր կը մնայ Մատուժմէ չվախնալը , և դրամը չընդունիտ , այս դրամն ուրիշի համար կտակեալ է ը- սելով :

Պատանին դարձեալ ասդին անդին կը հարցունէ յՄատուժայ աներկիւղ մէկը . և իւր քրոջը հետ միասին խօր- հելով մը կը գտնան , որ դահիճն ըլ- լայ Մատուժմէ չվախցող . ըստ որում կըսեն եթէ նա Մատուժայ երկիւղն ունենար , ինչո՞ւ պիտի մարդիկները կտրէր մեռցնէր : Արջապէս խորհուր- զը դահիճին վրայ կեցուց Մատուժայ աներկիւղութիւնը . հետեւեալ օրը քնաց դահիճին բաժինը վճարելու . և տեսաւ որ դահիճն ալ մերժեց . ըսե- լով որ ես ինչո՞ւ պիտի ըլլամ Մատու- ժմէ չվախցողը . կուսակալն ինձի կը հը- բամայէ , ես կը կտրեմ , ասոր մէջ ին- ձի յանցանք չկայ :

Այնուհետեւ տարաւ պատանին ուղղակի կուսակալին խորհելով սա ըլլայ Մատուժայ չվախցողը . Սա ալ պա- տասխանեց , ոչ , մենք այդ գործին մէջ յանցաւոր չենք , յանցանքը դատաւ- օրինն է , այնպէս կը վճռէ , մենք ալ կատարել կուտամք :

Պատանին կառնու արծաթը կը տանի դատաւորին , պատճառն իմա-

նալուն պէս կըսէ դատաւորը , որ Մա- տուժմէ չվախցող չկայ մենք ալ Մա- տուժմէ կը վախնամք , բայ որում չա- բաղործն սպաննողը իւր չարիքներն են , և ոչ դատաւորին վճիռը , վասն զի Մա- տուժմէ ալ որոշած է որ օրինադանց- ները քարկոծուին և մեռնին :

Պատանին որ կը յուսար թէ աներ- կիւղութիւնը դատաւորին քով պիտի գտնէր , կամ թէ սա ալ գէթ ուրիշ մը ցոյց տար , զարմացաւ երբ այս պէս ըսեց . ու ըսաւ , հապա այս կը տակը որո՞ւ պիտի տամ որ հօրս խօս- քը կատարած ըլլամ և պարտաւոր չը մնամ :

Վատաւորն ըսաւ որ աշխարհի մէջ Մատուժմէ չվախցող չըլլար զուր տեղը մի փնտռէր , միայն եթէ կուզես այդ դրամն հաս կը գնես և ես կ'ընդունիմ բայց սա պայմանաւ որ վարի բակը դիզուած ձիւնը (1) դուրս թափես :

Պատանին ալ իւր հօրը պատուի- լանը կատարելու համար օտար և ար- տաքին բեռն մը յանձն առաւ : Վա- տաւոր մ'ալ քանի մ'արծաթ շահե- լու համար Մատուժմէ չը վախնալ յանձն առաւ :

(1) Այս քաղաքը կամ գիւղը ձմեռուան եղա- նակի մէջ կը ձիւնէ շատ . և բոլոր որում տուներու յարկերն հօգէ են . ամեն անգամ ձիւնեկէ վերջ երբ առաջին անգամ արեւ ծագէր պէտք էին տա- նիքներէն վար պեղել . այս պատճառով դա- տաւորին տանը բակը ահային ձիւնակարկառ մը կոր որ վերցնելու էր , խորհեցաւ որ ասիկայ երբ որ ըլլայ պիտի վերնայ , և այն ալ ծախցով անշուշտ :

Քաղաքի ան Աւարէի աղա :
 Քեմաճան Բրդիկ Էֆենտի (2 օրի) :
 Քերէտէճէան Ենոյբ աղա :
 Քէշքէկեան Զովհաննէս աղա Կեսարացի :
 Քեօճեան մահտեօի Կարապետ աղա :
 Քընաճան Զարուխան աղա :
 Քուշաքըզեան մահտեօի Զակոր աղա :
 Քօթանճէան Զովհաննէս աղա :
 Օտապոյշի մահտեօի Պետրոս աղա :
 Փրէնկեան Զակոր Էֆենտի Կեսարացի (2 օրի) :

ՀԱՅ ՓԱ

Գաբրիէան Ստեփան աղա Ակնցի :

ՀԻՆ ՆԱԽԻԶԵԻԱՆ

Արժ. Մեարմը վարդապետ Սմբատանց :

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Արժ. Նեմէս Ծ. վարդապետ :

Պ. Մալխաս Մալխասեան :

ՂԱՐԱԲԱՂ

Արժ. Արիտակէս վարդապետ Սեդրակեան :

ՄԱՂԱՂԱՂ

Սերովբէեան Զովակիմ աղա :

Պիճակեան մահտեօի Զովհաննէս աղա :

ՄԱՐԱՇ

Սաբր Սարգիս եկեղեցւոյ վարժատան, նուէր ի Մէծ.

Զակորեան աղայէ որ ՂԱՂԵՐԱՆՊԵՐԻԱ :

Ճանարդեան մահտեօի Սարգիս աղա :

ՄԱՐԶՈՒԱՆ

Գեր. Զովհաննէս Արքեպիսկոպոս Եդեսեան :

ՅՈՊԳԷ

Արժ. Աթանաս վարդապետ տեսուչ :

" Բարդուղիմէոս վարդապետ :

Ս. Մուրատեան Սիմէօն աղա :

ՆԻԿՈՍԻԴԻԱ

Գեր. Նիկողոս Արքեպիսկոպոս առաջնորդական
 փոխանորդ :

Թանգարան վրձանութեան Նիկովոյից :

Տէր Կարապետեան Մկրտիչ աղա :

Տէր Մինասեան Եղիա աղա :

ՇԱՊԻՆԱՐԱԷԻՍԱՐ

Գեր. Աբրահամ Արքեպիսկոպոս :

ՈՒՆԵՒԱ (ԶԵՅՅՈՒՆ)

Սաբր Զովհաննէս եկեղեցւոյ վարժատան, Նուէր
 ի Մէծ. Զակորեան աղայէ որ ՂԱՂԵՐԱՆՊԵՐԻԱ :

Սաբր Զակոր եկեղեցւոյ վարժատան, Նուէր ի Մէծ.
 մահտեօի Նազարէթ աղայէ Ս. Գափամանէան :

Սաբր Ղուսաւորիչ եկեղեցւոյ վարժատան, Նուէր ի
 Մէծ. մահտեօի Նազարէթ աղայէ Ս. Գափաման :

Սաբր Ղատուածաճին եկեղեցւոյ վարժատան :

Սաբր Սարգիս եկեղեցւոյ վարժատան :

ՉԱՆԱԳ ԳՍԼԷ

Թալմաս աղա Եսկուբեան :

ՊԱՂԱՏԱՏ

Խոկնտեօրեան մահտեօի Խաչիկ աղա :

Խոկնտեօրեան մահտեօի Խոկնտեօր աղա :

ՊԵՐՈՒԹ

Արժ. Մեարմը վարդապետ տեսուչ :

Մէծ. Պօղոս աղա Վիլենեան :

ԶՈՒՂԱՅ

Խաչիկի Տ. Միսոս Բ. Բահնայ :

ՌԱՆԳՈՒՆ

Պաղտեան Խաչիկ աղա :

Պաղտասարեան Կարապետ աղա :

Ս. Մանուկեան Սարգիս աղա :

ՍԵՐԱՍՏԱ

Արժ. Պետրոս վարդապետ :

Ահարոն (մահտեօի) աղա :

Աշխահեան Սահտեօի Բարէլ աղա :

Տ. Թեոփրոսեանց մահտեօի Մարտիրոս աղա :

ՍԵՒԵՐԵԳ

Արժ. Էփրեմ վարդապետ Եդեսիացի :

Եղաւապեան Սարգիս աղա :

Էնի դօնեան Սարգսր աղա Մկնցի :

ԻԶՄԵՆԵԱՆ ՊԵՏՐՈՍ ԱՂԱ ՄԵՏԵՆՅԵԹ. ԳՈՐԾԱԿԱԼ

ՍԻՕՆԻ :

Սանարգ Էմին Կիրակոս աղա :

ՍԻՆԿԱՓՈՒՐ

Պ. Բարսեղ Զովակիմեան :

Պ. Գեորգ Անդրեասեան :

Պ. Խաչիկ Մովսէսեան :

ՍՂԵՐՏ

Մահտեօի Խարաշէլ աղա վարժապետ :

ՍՄԱՏԱՆԳ

Զարգէի Պ. Մ. Յ. Զօրաբեան :

M. D. Zerab Esp^{re}.

ՎԱՆ

Արժ. Զովհաննէս վարդապետ Մանասեանց :

Աւարեբեանց մահտեօի Սարտիրոսեան Սարգսր աղա :

Խաչատուրեանց մահտեօի Սկրտիչ աղա :

Լաճմանեան մահտեօի Համբարձում աղա :

Պօշեօեանց Գեորգ աղա :

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Գեր. Զակոր Սրբաղան Արքեպիսկոպոս :

Գալուստեանց Օհան աղա Զամթեցի :

Թիւֆէնլիճեան Մկրտիչ աղա Զամթեցի :

Ճանապեան Աւարէլ աղա :

ՄԵԾ. ՅԱԿՈԳՐ ԱՂԱ ՄԻԹԵՎԵԼԷԼԻ Ս. ԵՐԱՆԱԿԵՐԵՒԻ
 ԵԻ ԳՈՐԾԱԿԱԼ ՍԻՕՆԻ :

Մինասեան Զովհաննէս աղա :

Պաղալ մահտեօի Օհան աղա :

Տէր Գրիգորեան մահտեօի Կարապետ աղա :

Տէր Զակորեան Վարդան աղա Զամթեցի :

ՏՐԱՊԻԶՈՆ

Բարեհամբաւ Լ. Դպրոցի :

" Մեարմբեան դպրոցի Կիւմիս շխանէի :

" Դպրոցի Կիրասօնի :

Գապարեան Զակոր աղա :

Դրիգորեան Նիկողոս աղա :

Իբրաքեան Վարդան աղա :

Կիւրճիկեան Կարապետ աղա :

Կիւրճիկեան Պօղոս աղա :

Մախաբեան Արիտակէս աղա :

ՄԵՂԱՌՈՐԵՅ ՍԵՐԳԻՍ ԱՂԱ. ԳՈՐԾԱԿԱԼ ՍԻՕՆԻ :

Մինասեան Զօհաննէս աղա :

Զակորեան մահտեօի Ստեփան աղա :

Ս. Սեղաւորեան Խաչիկ աղա :

ՓԱՐԻԶ

Երամեան Գեորգ Պէյ. (3 օրի) :

Թիւրապեան Պետրոս աղա :

Զակորեան Սարգսր աղա :

ՔԻԼԻՍ

Զակոր աղա Ակնցի. (2 օրեան) :

Պաղտաճեան Կարապետ աղա. (2 օրեան) :

Պատմաճեան Գեորգ աղա :

ՔԻՇՆԵԻ

Արժ. Գրիգոր վարդապետ տէր Ստեփանեան :

ՑԱՆԿ

ԱՊՐԻԼ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՃԱՌԵՐ	73-79
Բանաստեղծութիւն	79-82
Լրկածք Լրիսթօնիւսի	83-84
Լիմահուծիւն հոգւոյ	84-86
Սեծապատիւ ժողով	86-89
Յիսուսի վրայ դատաստան	99-91
Լիապատգի հանգուցեալ Սիմէօն վարդապետի ոտա- նաւոր բանք ՚ի Ս. Գրիգոր Նարեկացին	91
ԺԱՄԱՆԱԿԱՐԱԿԱՆՔ	92-93
Պատմութիւն մը	93

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս
ու.թաժաղ թղթով .
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիյէ հանդերձ ճամապարհի ծախ-
քովը, կանխիկ վճարելու .
- Գ. Զատ տետրակ առնել ուղղուել, որեւոր է ամեն մէկ տետրին շրջա-
հեկան վճարել .